

## Ս. ՓԵԹԵՐՍՊՈՒՐԿԻ ՄԷՋ

### ՎԱՍՏԻՄԻՐ ՓՈՒԹԻՆ ԵՒ ՃՈՐՃ ՊՈՒՇ ՐԱՍԱԶԱՅՆԵՑԱՆ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼ, ՐԱԿԱՌԱԿ ԻՐԱԵՒ ԳԾՈՎ ԻՐԵՆՑ ՏԱՐԱԿԱՐԾՈՒԹԵԱՆ

Մոսկովա եւ Ուաշինգթոն կ'առաջադրեն իրենց գործակցութիւնը շարունակել, հակառակ իրաքի գծով տարակարծութեանց, յայտնած է Ռուսիոյ նախագահ Վլադիմիր Փուտին երէկ, Մ. Նահանգներու իր պաշտօնակիցին՝ Ճորճ Պուշին հետ հանդիպումէն ետք:

Ս. Փետերսպուրկի մէջ միացեալ մամուլի ասուլիսի մը ընթացքին, Փուտին ըսած է, թէ ինք եւ Պուշ վերահաստատած են, որ «ընթացքի մէջ գտնուող ռազմավարական մեր գործակցութեան արդարապէս չկայ» եւ թէ «մեր յարաբերութիւնները շատ աւելի ամուր են քան զանոնք փորձարկումի ենթարկած դէպքերը»:

Անպաշտօն վեհաժողովը հազիւ մէկ ժամ տեւած է: Երկու ղեկավարները նաեւ ստորագրած են պաշտօնակարգի փաստաթուղթեր, որոնք ի գորու կը դարձնեն կորիզային զէնքերու կրճատման համաձայնագիր մը, ըստ որուն՝ մինչեւ 2012 երկու կողմերուն կորիզային զէնքերը պիտի նուազին:

Միւս կողմէ, Պուշ եւ Փուտին վերահաստատած են Աֆղանիստանի մէջ «անբեկչութեան դէմ պատերազմին» իրենց յանձնարարութիւնը:

Միացեալ հաղորդագրութեան մը մէջ, անոնք նաեւ խոստացած են «թափ տալ ընդհանրական անբեկչութեան դէմ պատերազմին»:

Հաղորդագրութիւնը յայտնած է, թէ Ռուսիա եւ Մ. Նահանգներ կը ծրագրեն կեդրոնական հրթիռային միացեալ պաշտպանութեան ծրագրի մը վրայ:



Կորիզային մարզին մէջ իր գործակցութիւնը:

Փուտին մամուլի ասուլիսին ընթացքին յայտնած է, որ Մոսկովա Ուաշինգթոնի չափ մտահոգ է թեհրանի կորիզային ծրագրի գծով, դիտել տալով, որ Մ. Նահանգներու եւ Ռուսիոյ զինքորոշումները այդ հարցին առնչութեամբ երեւոյթներէն աւելի մօտ են իրարու:

Ան ըսած է, որ «համոզուելու պէտք չունինք այն տուեալին մասին, թէ հաւաքական բնաջնջումի զէնքերու տարածում պէտք չէ ըլլայ»: Սակայն քանի մը վայրկեան ետք, Փուտին պաշտպանած է Ռուսիոյ որոշումը՝ իրանի կորիզային առաջին հնոցին կառուցման գծով:

Պուշ, իր կարգին, զգուշաւոր կերպով ըսած է, թէ երկու կողմերը «մտահոգ են» իրանի կորիզային տենչերուն գծով:

Ռուսիոյ կորիզային ուժանիւթի նախարար Ուրաթ օր Մ. Նահանգները հրաւիրած էր Ռուսիոյ հետ

Շար.ը՝ էջ 10

## ԻՐԱՆԻ ԳԾՈՎ ՍԱՀՄԱՆՈՒԹՅԱՆ ՅԱՌԱՋԻՄՈՒԹԻՒՆ

Մինչ այդ, սակայն, երկու ղեկավարները սահմանափակ յառաջդիմութիւն արձանագրած են իրանի գծով: Փուտին վճռակամօրէն պաշտպանած է թեհրանի հետ

### ԱՄԵՐԻԿԱՅԻ ԵՒ ԲՐԻՏԱՆԱՅԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐ ԿԸ ՓՈՐՁԵՆ ՀԵՐՔԵԼ, ԹԷ ԻՐԵՆՔ ՍՏԱԾ ԵՆ ԻՐԱՔԻ ՄԷՋ ՀԱՒԱՔԱԿԱՆ ՔԱՆԴՈՒՄԻ ԶԷՆՔԵՐՈՒ ԳՈՅՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Բրիտանացի եւ ամերիկացի բարձրաստիճան պաշտօնատարներ կը փորձեն հերքել եւ անբնորոշելի նկատել այն բոլոր ամբաստանութիւնները, ըստ որոնց՝ բրիտանական ու ամերիկեան կառավարութիւնները ստած ու չափազանցուած յայտարարութիւններ կատարած են իրաքի մէջ հաւաքական քանդումի պէտքերու գոյութեան մասին «փաստեր» հրապարակելով՝ արդարացրելու համար պատերազմի որոշումը:

Բրիտանիոյ արտաքին գործոց նախարար ձեք Սթրո հարցապարոյցի մը ընթացքին ըսաւ, որ գաղտնի սպասարկութիւններուն փոխանցած տեղեկագիրները ճշգրիտ էին եւ չափազանցուած ոչինչ կար անոնց մէջ: Սթրո աւելցուց, որ փաստերը գոյութիւն ունին եւ շինծու չեն եւ թէ Մատամ Հիւսէյն ունէր այդ պէտքերը: Սթրո դիտել տուաւ, որ երբ անցեալ Սեպտեմբերին հրապարակուեցան տեղեկագիրները շինծու ու երեւակայական ոչինչ կար անոնց մէջ, որովհետեւ բոլոր փաստերը կը հաստատէին, թէ Մատամ կարողութիւնն ու կարելիութիւնը ունի 45 վայրկեանէն արձակելու քիմիական ու կենսաբանական գոյութիւններով հրթիռներ: Սթրո շեշտեց, որ տեղեկագիրներուն մէջ որեւէ բաժին կամ տեղեկութիւն չէր չափազանցուած:

Բրիտանական «Կարտիըն» օրաթերթին մէջ լոյս տեսած տեղեկագիր մը կը նշէր, թէ Սթրո եւ անոր ամերիկացի պաշտօնակիցը՝ Քոլին Փաուրլ տեղեկագիրները հրապարակելէ առաջ խորհրդակցած են եւ կասկած արտայայտած ներկայացուցիչ փաստերուն ազդեցութեան ու պորտիւնի մասին: Ըստ օրաթերթին, Փաուրլ եւ Սթրո վստահ չէին, որ պատրաստ փաստերը բարար են ամբողջ աշխարհը համոզելու, թէ Մատամ հաւաքական քանդումի պէտքերու մեծ պահեստ մը ունի, որ կը սպառնայ ամբողջ աշխարհին: Հետեւաբար, աւելի ուշ տեղեկագիրները «պատուաստուած» են «մեծ փաստերով», կը գրէ «Կարտիըն»:

Բրիտանիոյ արտաքին գործոց նախարարութիւնը հերքեց «անճիշտ» նկատելով օրաթերթին կողմէ հրապարակուած տեղեկութիւնները, պնդելով, որ Սթրոյի եւ Փաուրլի միջեւ նման հանդիպում մը տեղի չէ ունեցած:

Վարչապետ Թոնի Պլեյը եւս հերքեց, որ Լոնտոն եւ Ուաշինգթոն «շինծու» փաստեր հրապարակած են: Պլեյը անբնորոշելի նկատեց փաստեր «շինծու» ամբաստանութիւնները, պնդելով որ իրաքի մէջ կան հաւաքական քանդումի

պէտքեր, որոնք սակայն տակաւին չեն գտնուած: Պլեյը ըսաւ նաեւ, որ ժողովուրդը պիտի ըլլայ դատողը, երբ տեսնէ անհերքելի փաստերը եւ գոհացած պիտի պայ, որ իր կառավարութիւնը ճիշդ որոշումը տուած է:

ՍԻ. ԱՅ. ԷՅ.Ի տնօրէնը՝ Ճորճ Թենքը իր կարգին պաշտպանողականի անցաւ, շեշտելով որ գործակալութիւնը եւ անոր անձնակազմը յստակ տեղեկութիւններ փոխանցած են կառավարութեան: Թենքը դիտել տուաւ, որ ՍԻ. ԱՅ. ԷՅ. ճշգրտութեամբ ու բծպիսիւրութեամբ կատարած է իր աշխատանքը՝ անհրաժեշտ տեղեկագիրները պատրաստելով եւ փոխանցելով այն ինչ որ տեսած ու հաստատած է: Թենքը հերքեց, որ ՍԻ. ԱՅ. ԷՅ.Ի տեղեկագիրները անճիշտ եւ չափազանցուած տեղեկութիւններ փոխանցած են Սպիտակ Տան՝ թափ տալու համար պատերազմի ընտրանքին:

Պատերազմական գործողութիւններուն մասնակցած ամերիկացի բարձրաստիճան պիւնտրական մը սակայն բաւական հիասթափուած է կացութենէն: Չօր. ձեյմս Քոնուէյ ըսաւ, որ երբ իրաքի դէմ պատերազմ յայտարարուեցաւ, ինք այն տպաւորութիւնը ունէր, թէ իրաք քիմիական ու կենսաբանական պէտքեր պիտի գործածէ: Սակայն Մատամի տապալումէն գրեթէ երկու ամիս ետք, այդ պէտքերուն հետքն անգամ չէ գտնուած: Քոնուէյ դիտել տուաւ, որ պէտքերը չեն գտնուած հակառակ տարուած մեծ ու լայնածիր փնտնութիւնի աշխատանքին, որ կը մնայ ապարդիւն:

Յրանսայի Ընկերվարական Կուսակցութեան ղեկավար Յրանսուա Հոյանտ ամբաստանեց նախագահ Ճորճ Պուշը, դիտել տալով որ ամերիկացի ղեկավարը ստած է իրաքի դէմ պատերազմ յայտարարելու պատճառներուն մասին: Հոյանտ ըսաւ, որ Պուշ ստած է եւ թէ այդ սուտը անբնորոշելի է, որովհետեւ անիկա կ'աղաւաղէ ժողովրդավարութեան դիմագիծը եւ թէ կրնայ լուրջ հետեւանք ունենայ:

Շար.ը՝ էջ 10

### «ՉԵՐ ԿԵԱՆՔՆ ՈՒ ՎԱՐՔԸ ՕՐԻՆԱԿ ԹՈՂ ԸԼԼԱՆ ԱՅՍ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ»

ԷՁ 4

## ԱՄՍՐԱԿԻ ԻՐ ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐՈՒՆ ԿԸ ԹԵԼԱԿՐԷ ԱՉՐՊԷՅՅԱՆ ՉԱՅՅԵԼԵԼ

Աստրալիոյ արտաքին գործոց եւ առևտուրի նախարարութիւնը Աստրալիոյ քաղաքացիներուն խորհուրդ տուած է չմեկնի Արգենտինա, որովհետեւ այդ երկրին մէջ առկայ է օտարներու դէմ ահաբեկչական արարքներու վտանգը: Պաքոյի «Ալաուիք» թերթին համաձայն, նախարարութեան հաղորդագրութեան մէջ նշուած է, թէ «Պաքոյի ճամբորդութիւնը լոյ է անցանկալի հետեւանքներով»:

Նախապէս Բրիտանիոյ կառավարութիւնը հրապարակած էր յայտարարութիւն մը, որ նշած էր, թէ Արգենտինա այցելելը չափազանց վտանգաւոր է օտարներու համար:

Քանատայի կառավարութիւնը եւս նոյնանման յայտարարութիւն մը կատարած է: «Ալաուիք»-ի համաձայն, այս բոլորը կ'ապացուցեն, թէ փոխուած է Արգենտինայի հանդէպ օտար պետութիւններու վերաբերմունքը:

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՅԱՆՃԱՏՈՂՈՎՐ ԸՆՏՐԱԿԱՆ ՅԱՆՃԱՏՈՂՈՎՐ ԸՆՏՐԱԿԱՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՎԵՐՁՆԱԿԱՆ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ

Հայաստանի Կեդրոնական Ընտրական Յանձնաժողովը, ամփոփելով ընտրատարածքներու ընտրական յանձնաժողովներէն ստացուած արդիւնքները, Շաբաթ, 31 Մայիսին, մամուլի ասուլիսի մը ընթացքին հրապարակեց Մայիս 25ին տեղի ունեցած Հայաստանի Արգենտինայի Ժողովի ընտրութիւններու եւ Հայաստանի Սահմանադրութեան բարեփոխման նախագիծի քուէարկութեան վերջնական արդիւնքները:

Հայաստանի Արգենտինայի Ժողովը բաղկացած է 75 համամասնական եւ 56 մեծամասնական ընտրակարգով ընտրուած պատգամաւորներէ:

Արգենտինայի Ժողովի համամասնական ընտրակարգի արդիւնքներուն առնչութեամբ, յանձնաժողովը յայտնեց, որ նորընտիր խորհրդարանին մէջ Արգենտինայի Միաբանութիւն Կուսակցութեան ցանկէն ընտրուած են 9 թեկնածուներ, «Արդարութիւն» դաշինքէն՝ 14 թեկնածուներ, Հայաստանի Հանրապետական Կուսակցութենէն՝ 23 թեկնածուներ, Հ. Յ. Դ. Կ.՝ 11 թեկնածուներ, Միաբանութեան Աշխատանքային Կուսակցութենէն՝ 6 թեկնածուներ, Օրինաց Երկիր Կուսակցութենէն՝ 12 թեկնածուներ:

Յանձնաժողովը նաեւ հրապարակեց Արգենտինայի Ժողովի մեծամասնական կարգով ընտրուած 53 պատգամաւորներու անունները: Մեծամասնական 3 ընտրատեղամասերու մէջ ընտրութիւնները անվաւեր հռչակուած են: Նշեալ շրջաններուն մէջ նոր ընտրութիւններ տեղի պիտի ունենան Յունիս 14ին:

Նշենք, որ մեծամասնական կարգով ընտրուած 53 պատգամաւորներու շարքին են չորս պատգամաւորներ, որոնք կը վայելեն Հ. Յ. Դ. Կ. պարակցութիւնը:

Ինչ կը վերաբերի Հայաստանի Սահմանադրութեան բարեփոխման նախագիծի հանրաքուէի արդիւնքին, յանձնաժողովը պաշտօնապէս յայտարարեց, թէ բարեփոխման նախագիծը մերժուած է: Քուէարկելու իրաւունք ունեցող 2,339,704 քաղաքացիներէն հանրաքուէի քուէարկութեան մասնակցած է 1,215,908 ընտրող: Սահմանադրական բարեփոխումներուն դէմ քուէարկած են 552,257 քաղաքացի, իսկ թեր՝ 559,687 քաղաքացի, ինչ որ սակայն օրէնքով պահանջուած թեր քուէարկողներու համեմատութենէն նուազ է:

## ԵՎԻԱՆ

### - ԾԱՐՏԱՐԱՐՈՒԹԵՍԻ ՈՒԹԵՐՈՒ ՎԵՀԱԺՈՂՈՎ - ՇԻՐԱՔ ԵՒ ՊՈՒՇ ԻՐԱՐՈՒ ԶԵՌՔ ՄԵՂՄԵՑԻՆ



Յրանսայի էվիան քաղաքին մէջ երէկ պաշտօնական ճաշկերպութիւնով մը ընթացեցաւ աշխարհի ճարտարապետութեան ու թմբեցողութեան վեհաժողովը, մասնակցութեամբ բոլոր երկրներէն ղեկավարներու: Վեհաժողովի աշխատանքները կը սկսին այսօր:



Միացեալ Նահանգներու նախագահ Ճորճ Պուշ հասաւ Յրանսա, ուր վեհաժողովին նախօրեակին տեսակցութիւն մը ունեցաւ Յրանսայի նախագահ Ժաք Շիրաքի հետ: Երկու ղեկավարները, որոնք իրաքի հարցով սուր տարակարծութիւններ ունենին, առաջին անգամ ըլլալով տեսակցեցան իրաքեան պատերազմէն ի վեր: Անոնք բարեկամաբար իրարու ձեռք սեղմեցին: Ութերեւ Վեհաժողովին հրաւիրուած են նաեւ բար-

զաւաճող տասներկու այլ երկրներու ղեկավարներ: Մինչ այդ, էվիան քաղաքը վերածուած է հակահամաշխարհայնացումը դադարեցնելու: խոսակաւած են նմանօրինակ խոսքեր ցուցնելու եւ հակազդեցութիւններ:

### ՎԱՐՉԱՊԵՏԸ ՏԵՂԱԿԱՆ ԵՒ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՐՅԵՐ ՔՆՆԱՐԿԵՑ ԺՈՄՊԼԱԹԻ, ԱՊԱ ՊԵԹԸԼԻ ՀԵՏ



Հարիրի Ե. Պետրոսյան

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երէկ երեկոյան ժամը 8:30ին այցելեց Այն Ռիւնէ, ուր ընդունուեցաւ խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրիի կողմէ:

Քննարկումի առարկայ դարձան տեղական եւ շրջանային իրադարձութիւնները, ինչպէս նաեւ կառավարութեան վերջին նիստին ընթացքին տեղի ունեցած բանավէճն ու լարուածութիւնը:

Միև կողմէ, Քորայթէմի մէջ վարչապետ Ռաֆիք Հարիրի երէկ երեկոյան ընդունեց Ընկերվար Յառաջդիմական կուսակցութեան ղեկավար, երեսփոխան Ուալիտ Ժոմայլարը, որուն հետ քննարկեց նախագահական ընտրութիւններուն գծով շրջան ընող յայտարարութիւնները, որոնք վերածուեցան նոյնիսկ բանավէճի:

Ժոմայլար քննադատեց նախագահ զօր. Էմիլ Լահուտի նստաշրջանի երկարաձգումն կամ նախագահական ընտրութիւններուն առնչուող արտայայտութիւնները եւ նկատել տուաւ, որ այդ հարցը կ'արժարժուի միայն երբ խորհրդարանը կը ճշդէ գայն:

Վարչապետ Հարիրի ընդունեց նաեւ Լիբանանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Վինսենթ Պէթըլը, որուն հետ քննարկեց տեղական եւ շրջանային հարցեր:

### ՎԱՐՉԱՊԵՏ ԸԱՐԻՐԻ ԿԸ ՅՍՏԱԿԱՑՆԵ ԻՐ ԿԵՅՈՒԱԾԸ՝ ՆԵՐՔԻՆ ԵՒ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԸԱՐՑԵՐՈՒ ՆԿԱՏԱՍՐ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երէկ քուէյթեան «Ռաշի Աամ» օրաթերթին հետ ունեցած իր հարցազրույցին ընթացքին վստահեցուց, որ յառաջիկայ Հինգշաբթի օր կառավարութիւնը պիտի գումարէ իր ընթացիկ նիստը, օրակարգի վրայ ունենալով տարբեր հարցեր:

Վարչապետ Հարիրի շեշտեց, որ ինք կը գործէ «որոշուած եռանկիւն»ի ծիրէն ներս, այսինքն՝ նախագահին, Սուրիոյ հետ լաւ յարաբերութիւններու եւ իրաւասութիւնները յարգելու սահմաններէն ներս:

Վարչապետ Հարիրի ընդգծեց, որ նախագահ զօր. Էմիլ Լահուտի հետ իր յարաբերութիւնները լաւ եւ իրաւասութիւնները լաւ պէս հսկուած են, հիմնուելով երկրին սահմանադրութեան վրայ:

Վարչապետ Հարիրի յայտնեց, որ նախագահ Լահուտի հետ իր յարաբերութիւնները այդքան ալ հեղատու չեն, սակայն դիտել տուաւ, որ պէտք չէ գտնուի չափազանցել, յոյս յայտնելով շրջանցել այդ տարակարծութիւնը:

Կառավարութեան վերջին նիստին տեղի ունեցած վիճարկութեան մասին

(կառուցներու հարցերուն շուրջ), վարչապետ Հարիրի ըսաւ, որ ինք լաւ գիտէ եւ կը հասկնայ շրջանային իրադարձութիւնները, հետեւեալ կը փոփոխուի, որ բոլոր հարցերը լուծուին երկրին մէջ:

Վարչապետ Հարիրի դիտել տուաւ, որ նախագահին նստաշրջանը երկարաձգուելու կամ նախագահական ընտրութիւններու մասին արտայայտութիւններ ունենալու երեւոյթը սխալ է և անլոյց, որ նախագահ Լահուտի կողմէ այդ գծով հրապարակուած հաղորդագրութիւնը լաւագոյն փաստ է:

Հարիրի նկատել տուաւ, որ սուրիական ուժերու վերադասուողութեան թափփոյտ համաձայնագրէն շեղում չի նշանակեր, որովհետեւ թափփոյտի այդ ուղղութեամբ կ'երթայ:

Հարիրի ըսաւ, որ հիմնական հարցը Լիբանանի մէջ սուրիական ուժերու ներկայութիւնը չէ, այլ Իրաքի վերջին ժամանակութիւնը Մազաբէ Եսպայի եւ կողմնի մէջ:

Հարիրի շեշտեց, որ մարտիներու Նասրալլա Մֆէյը պատրիարքին վերջին յայտարարութիւնները իրանաեւտուրիական յարաբերութիւններուն մասին պատմական էին եւ անլոյց, որ իսլամները գոհ են այդ յայտարարու-

թիւններէն:

«Հաւատարմութիւն Դիմադրութեան» շրջապայլի երեսփոխանական պլոթի նախագահ երեսփոխան Մոհամէտ Ռաստ Սուրի Հուշ շրջանին մէջ տուած մամուլային ասուլիսի մը ընթացքին շեշտեց, որ հակառակ Միացեալ Նահանգներու կողմէ իսրայէլի տրամադրուած անսանձ «շտալ» գորակցութեան, իսրայէլ տակաւին կը սարսափի Հրապարակի գէնթերէն, «Իսկ Հրապարակի սառնասրտութիւնը «կը քանդէ» իսրայէլի ջիղերը եւ կը մտահոգէ գայն»:

Ռաստ ընդգծեց, որ Լիբանան ներկայ շրջանային պայմաններուն մէջ կարիքը ունի ներլիբանանեան գորակցութեան, ապահովութիւնը եւ կայունութիւնը պահպանելու ծրագրէն ներս:

Ռաստ դրուատեց Լիբանանի մէջ դիմադրութեան հանդէպ գոյութիւն ունեցող հաւատքը եւ գորակցութիւնը իրանաեւտուրիական մեծամասնութեան կողմէ:

Անդրադառնալով հարաւային Լիբանանի մէջ լիբանանեան բանակ տեղադրուելու մասին Ռաստ ըսաւ, որ բանակը արդէն իսկ ներկայութիւն է հարաւի մէջ եւ կը հսկէ Լիբանանի ու իրանաեւտուրիական պաշտպանութեան ու ապահովութեան:

### ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

● ՀՈՎԱՆԱԿՈՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԵՐԿՐԱՍԱՐԳՈՒԹԵԱՆ ԵՒ ԵՐԿՐԱՍԱՐԳՈՒԹԵԱՆ, կենսոլորտի եւ զբօսաշրջութեան նախարարներ Սեպուհ Յովնանեանի, Ֆարէս Պուէյզի եւ Ալի Ապտալլայի, Այէլի մէջ բացուած կատարուեցաւ 2003ի կենսոլորտի եւ զբօսաշրջութեան փառատօնին:

Փառատօնին ներկայ գտնուեցան նախարարներ Յովնանեան եւ Ապտալլա, Ֆարէս Պուէյզի ներկայացուցիչը՝ կենսոլորտի նախարարութեան ընդհանուր տնօրէն Պերճ Հաճեան, երեսփոխաններ Աբրահամ Շըճայպ, Անթուան Անտարուս, Լիբանանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Վինսենթ Պէթըլը, ինչպէս նաեւ բարձրաստիճանի այլ անձնաւորութիւններ, հոգեւորականներ եւ գիւնտարականներ:

Լիբանանեան քայլերգի ունկնդրութենէն ետք խօսք առաւ Յովնանեան, որ շեշտեց, թէ լիբանանեան պետութիւնը կը ցանկալի ստեղծել մաքուր եւ ապականութենէ զերծ կենսոլորտ մը:

Իրենց կարգին, Ապտալլա եւ Հաճեան շեշտեցին, որ Լիբանան կ'ուզէ իր կենսոլորտի եւ զբօսաշրջութեան մարզերով յաջողութիւններ արձանագրել ընկերային եւ

տնտեսական մարզերուն մէջ:

● ԱՐՏԱՔԻՆ գործոց եւ արտերկրի լիբանանցիներու հարցերու նախարար Ժան Օպէյտ երէկ յետմիջօրէին Թեհրանէն վերադարձաւ Լիբանան:

Պէյրութի միջազգային օդակայանին մէջ Օպէյտ պատասխանելով լրագրողներու կողմէ ուղղուած շարք մը հարցումներու հաւաստեց, որ Լիբանանի համար կարեւորագոյնը խաղաղութեան ճամբան է, եւ ոչ ճամբու քարտէսները: Ան անլոյց, որ հարկ է ընդլայնել խաղաղութեան ճամբան, որպէսզի ան ներառուի արաբե-իսրայէլեան տագնապի բոլոր կողմերը, որովհետեւ խաղաղութեան ճամբու յաջո-

ղութիւնը անկարելի է, եթէ նկատի ունենանք սահմանափակ եւ մասնակի լուծումներ:

Օպէյտ նշեց, որ Կրեւտի եւ Թեհրանի մէջ տեղի ունեցած խորհրդածրոյցներուն ընթացքին Լիբանանի կեցուածքը շատ յստակ էր բոլոր հարցերուն նկատմամբ:

Օպէյտ ընդգծեց, որ Միջին Արեւելքի մէջ արդար եւ մարդաբան խաղաղութիւնը կը գործադրուի, երբ իսրայէլեան ուժերը քաշուին բնագրանուած բոլոր արաբական հողերէն, ազատ կ'արձակուին բոլոր բանտարկեալները եւ կը յարգուի պաղեստինցի գաղթականներու տունդարձի իրաւունքը:

HAIGAZIAN UNIVERSITY  
DEPARTMENT OF ARMENIAN STUDIES

Invites you to the centenary celebration of the famous composer

**ARAM KHACHATURIAN**  
(1903-1978)

Presented by **DR. PAUL S. MEERS**  
(American University of Beirut)

Guest speaker: **DR. WALID GHOLMIEH**  
President of the Lebanese National Higher Conservatory

Live performance - Multimedia presentation  
Tuesday, June 3, 2003 - 7:30 p. m.  
Haigazian University Auditorium - Kantari, Beirut

ՀԱՄԱՍԿՈՍ ՀՆՈՐԱԿԱԼԻԸ

Վարդան Զառոյեան եւ զուգանքը՝ Իշխան եւ Ծովակ շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով եւ նուիրատուութեամբ մասնակից եղան իրենց կնոջ եւ օտը՝ ՍՕՄԵ ԸՆՈՒՅԵԱՆԻ (Ծնեալ՝ ԳԱՆՈՒՍԵԱՆ) մահուան սուգին:

Հ. Բ. Ը. Մ. - Հ. Ե. Ը. ԱԼԵՔ ՍԱՆՈՒԿԵԱՆ ԿԵՂՈՒՄ ՄԵԱԿՈՒԹԱՅԻՆ ՅԱՆՁՆԱՆՈՒՄԲ

**ՄԵԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՐԵԿՈՅ**

**ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ ԽԱՂԻԿՆԵՐ ԵՒ ԸԱՅՐԵՆՆԵՐ**

Կը ներկայացնեն՝

**ԳՐԻԳՈՐ ԸԱՇԻՆԵԱՆ ԵՒ ԻՐՍԱ ՏԵՏԵԱՆ**

Չորեքշաբթի, 4 Յունիս 2003, երեկոյան ժամը 7:30ին, Ալեք Սանուկեան Կեղրոնի համալսարանի մէջ, Ութուր:

**ԶՈՒԱՐԹՆՈՅ ԿԵՂՈՒՄ ՄՏԵՈՎ ԹԵՐԱՇ ՀԱՅ ՍԱՆՈՒԿԵՐՈՒ**

Բարձր հովանաւորութեամբ Լիբանանի Հանրապետութեան Առաջին Տիկին

**ԱՆՏՐԵ ԷՄԻԼ ԼԱՇՈՒՏԻ**

ՀԱՇՄԱՆԳԱՄԵՐՈՒ ԻՐԱԿԱՆՑ ՀԱՄԱՇԵՎԱՐԱՅԻՆ ՀՈՂԱՎԱԿԻՐ ԵՒ ԶՈՒԱՐԹՆՈՅ ԿԵՂՈՒՄ ՀԻՄՆԱԳՐՈՒԹԵԱՆ ԻՏԱՄԵՎԿԻՆ ԱՌԻԹՈՎ

Լիբանանի Հայ Համայնքի Ընկերային Ծառայողներու Միութիւնը ուրախութիւն ունի ձեզ հրաւիրելու

**ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՀԱՄԵՐԳԻ**

Կատարողութեամբ՝

Հայրենի Աչազուրկ Երիտասարդ Արուեստագետներու

Տեղի պիտի ունենայ Զաքար, 7 Յունիս 2003, երեկոյան ժամը 8:30ին, «Յ. Տը Սելընեան» բաւերասրահին մէջ, Պուրճ Համուս:

● ԳԵՐԵԿԱՅԻՆ՝ միւլտիմիտ օրը, Զաքար, 7 Յունիս կեսօրէ ետք ժամը 4:30ին:  
● ՏՈՒՄԵՐՈՒ ՍՏԱՆԱԿ Կեղրոնի համալսարանի (01-446442) եւ հանդէսի օրը՝ մուտքին:

**DAY WATER**

Մասնավաճառի դրոշմով ստանալու ենք զուտ զուտ պարզ ջրով: Ընդամենը 13 Տ. Հասարակութիւններու համար յատուկ գիւրիքի մէջ:

Կազմակերպութիւնը՝  
AFTEEM EST.  
Near Lebanese Electric Company  
Tel.: 01-446 325 / 570 007

**RECOMMENDED FOR BABIES**

**DAY WATER**  
Clean & Safe Water  
Under Hygienic Condition  
NATURAL - PURELIGHT - LOW IN SODIUM

Free delivery 19 Lit. @ 2000.L

Approved By Samoya Cool

Mr. Jim Keushkerian owner  
**DAY WATER, Tel.: 03/435298**

**ԻՍՐԱՅԷԼ ԿԸ ՍԱՐՍԱՓԻ ՉԸՉՊԱԼԼԱՅԻ ՍԱՌՆԱՍՐՏՈՒԹԵԱՆ Ի ՏԵՍ**

Կ'ԸՍԵ ՌԱՍՏ

«Հաւատարմութիւն Դիմադրութեան» շրջապայլի երեսփոխանական պլոթի նախագահ երեսփոխան Մոհամէտ Ռաստ Սուրի Հուշ շրջանին մէջ տուած մամուլային ասուլիսի մը ընթացքին շեշտեց, որ հակառակ Միացեալ Նահանգներու կողմէ իսրայէլի տրամադրուած անսանձ «շտալ» գորակցութեան, իսրայէլ տակաւին կը սարսափի Հրապարակի գէնթերէն, «Իսկ Հրապարակի սառնասրտութիւնը «կը քանդէ» իսրայէլի ջիղերը եւ կը մտահոգէ գայն»:

Ռաստ ընդգծեց, որ Լիբանան ներկայ շրջանային պայմաններուն մէջ կարիքը ունի ներլիբանանեան գորակցութեան, ապահովութիւնը եւ կայունութիւնը պահպանելու ծրագրէն ներս:

Ռաստ դրուատեց Լիբանանի մէջ դիմադրութեան հանդէպ գոյութիւն ունեցող հաւատքը եւ գորակցութիւնը իրանաեւտուրիական մեծամասնութեան կողմէ:

Անդրադառնալով հարաւային Լիբանանի մէջ լիբանանեան բանակ տեղադրուելու մասին Ռաստ ըսաւ, որ բանակը արդէն իսկ ներկայութիւն է հարաւի մէջ եւ կը հսկէ Լիբանանի ու իրանաեւտուրիական պաշտպանութեան ու ապահովութեան:

**ՆԱՍՐԱԼԼԱ ԿԸ ՔՆՆԱԳԱՏԵ ԲՈՆԿՐԵՍԱԿԱՆ ԻՍԱՅԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

Հրապարակի ընդհանուր քարտուղար Հասան Նասրալլա ուղղակիօրէն քննադատեց Լիբանան այցելող ամերիկացի քննիչական Տարիլ Իսայի քննադատութիւնները եւ դիտել տուաւ, որ անոր յայտարարութիւնները անարգանք են Լիբանանի եւ իրանաեւտուրիական ժողովուրդին հասցէին:

Նասրալլա յայտնեց, որ Հրապարակի պիւնտրութիւն արժողութիւնը հաշուել փափագողները պէտք է ներկայանան Լիբանան եւ իսպիւն բռնագրաւուած հողերու ապստամբութեան գերիներու ապստամբութեան մասին:

Նասրալլա շեշտեց, որ դիմադրութիւնը իր պատիւը եւ երկիրը չի ծախեր ոչ 500 միլիոն տոլարով, ոչ ալ միլիառաւոր տոլարներով:

**ՀԱՅԿԱԳՏԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ**

Ձեզ կը հրաւիրուի

**ՍԻՐԿԱՐԴ ՖԱՂԵԱՆԻ**

**ՋՐԱՆԵՐԿԵՐՈՒ ՑՈՒՑԱՇԱՆՂԵՍԻՆ «ՉՈՐՍ ԵՂԱՆԱԿՆԵՐ»**

«Արթիւր Մաթոսեան» Արուեստի Կեղրոն - Մուկար շէնք

Հայկազեան համալսարան - Զանթարի

Ցուցահանդէսը կը տեւի մինչեւ 10 Յունիս 2003:

**ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՈՂՂԱՆՈՒՐ ՄԻՈՒՑՈՒՄ**

ԼԻԲ. ԿՐԹԱԿԱՆ ՅԱՆՁՆԱՆՈՒՄԵ

**ՎԵՐԱՄՈՒՏԻ ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ**

**Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՄԱՐԱՆՆԵՐ**

Դարուկի Յովակիմեան (Երկրորդական) հեռ. 01/481319

Պողոս Գ. Կարմիրեան (Միջնակարգ) հեռ. 04/413933

Լեւոն Կ. Նազարեան (Նախակրթարան) հեռ. 01/484196

**ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՈՂՂԱՆՈՒՐ ՄԻՈՒՑՈՒՄ**

ԼԻԲ. ԿՐԹԱԿԱՆ ՅԱՆՁՆԱՆՈՒՄԵ

**ՎԵՐԱՄՈՒՏԻ ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ**

**Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՄԱՐԱՆՆԵՐ**

Դարուկի Յովակիմեան (Երկրորդական) հեռ. 01/481319

Պողոս Գ. Կարմիրեան (Միջնակարգ) հեռ. 04/413933

Լեւոն Կ. Նազարեան (Նախակրթարան) հեռ. 01/484196

**2003-2004 ԿՐԹԱՇՐՏԱՆ**

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ Լիբանանի սեփական երեք վարժարաններու 2003-2004 դպրոցական տարեշրջանի նախնական արձանագրութիւնները, նախկին եւ նոր աշակերտներու համար, տեղի պիտի ունենան 16 Յունիս 2003էն մինչեւ 14 Յունիս 2003, ամէն օր, առաւօտեան ժամը 9:00էն 13:00, բացի Զաքար եւ Կիրակի օրերէն, համաճառ վարժարաններէն ներս:

Կրթական Յանձնախումբ, ինչպէս անցեալին, այս տարի եւս կրթնապատի դիւրութիւններ պիտի ընծայէ ուսումնական գետնի վրայ յաջող սաներու եւ տնտեսական ու նիւթական դիւրութիւն ունեցող ընտանիքներու զուգանքներուն:

Կրթնապատի դիւրութեան կարելի է ստանալ արձանագրութեան ժամանակ:

Սորել աշակերտներէն կը պահանջուի.

1. Ինքնուրուշ բոլորի լուսապատճեն.
2. Երկու լուսակար.
3. Նախորդ տարուան վկայագիր.

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ ԿՐԹԱԿԱՆ ՅԱՆՁՆԱՆՈՒՄԵ

**ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՆ ԵՐԳԱՇԱՆՂԵՍ**

**ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԸԼԼԱԼՈՎ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԵՋ**

Կատարողութեամբ՝ հայրենի երգչուհիներ

**ԶԱՐՈՒԷՐ ՊԱՊԱՅԵԱՆԻ ՎԱՐՉՈՒԹԻՆ ՎԱՐՉԱՆՆԵՐԸ**

Չորեքշաբթի, 4 Յունիս 2003, երեկոյան ժամը 8:30ին, «Յակոբ Տը Սելընեան» բաւերասրահին մէջ:

ՍԱԿ՝ 15,000 եւ 10,000 Լ. Ո.

● ՏՈՒՄԵՐՈՒ Կը վաճառուին Համազգայինի գրախանութ, «Շաղոյեան» կեղրոն՝ Պուրճ Համուս, «Տիւրքեր Զեք»՝ Պուրճ Համուս, «ՕԵԼԻՃ» գրախանութ՝ Անթիլիաս եւ Համազգայինի «Լ. Զանթ» կեղրոն:



# ՍՊԱՅ ՊԱՐԲԵՐԱԳԻՐՔ ՄԸ, ՎԵՑ ՀԱՐԻՐ ԷՁ, ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

«Ողջակիզման եւ Հրեական Աշխարհ» պարբերականի Յունուար-Օգոստոս 2003ի բիւլետենը նուիրուած է Հայկական Ցեղասպանութեան: Խմբագրապետն է Ժորժ Պենուսան: Աշխատակցած են բազմաթիւ մասնագէտներ՝ պատմաբան, համալսարանական, իրաւագէտ, դասախօս: Այս ծաւալուն հատորին մէջ քննուած են պատմութեան, մարդկային իրաւանց, Օսմանեան կայսրութեան եւ անոր տիրապետութեան տակ ապրող ժողովուրդներուն, միջազգային օրէնքին եւ ցեղասպանութիւններուն վերաբերող հարցեր:

Իվ Թեռնոն, Քլեար Մուրատեան, Անէս Վահրամեան, Մովսէս Գեւորգեան, Յարութիւն Գեորգեան, Նայր Աուրոն, Էլիզապէթ Էնթալի, Անէթ Պեքեր, Ժորժալ Լըրուա, Սեւան Ղարիպեան, Վահէ Թաշեան, Քարթին Քորիօ, Ժորժ Պենուսան, ինչպէս նաեւ Արա Գրիգորեան եւ Ալեքսի Կովսեան, Հայկական Ցեղասպանութեան, անոր ըմբռնումին եւ յարակից հարցերուն կ'անդրադառնան: Քարոզչական բնոյթ չունի այս հատորը: Պետք է ծառայէ իբրեւ բազմերես տեղեկութեան աղբիւր: Ինչպէս այլ առիթներով ըսած են, քաղաքական գործիչներու եւ մտաւորականներու տրուելիք օգտակար նուէր մը, որպէսզի երբ խօսին, կարգախօսներ չկրկնեն եւ չամբաստանուին իբրեւ բուէ որսացող:

Ամէն անգամ որ Իվ Թեռնոն կ'արտայայտուի, կը սպասեմ որ Հայկական Ցեղասպանութեան անկշուղ հարցերու ստուերի մէջ մնացած մէկ երեսը լուսաւորէ: Գիտէիք, որ թիւրտերու եւ նոյնիսկ թուրքերու կողմէ հայեր պահուած եւ փրկուած են: Այս երեւոյթին կ'անդրադառնայ Իվ Թեռնոն, որ ուրացման դէմ ըլլալով հանդերձ, երկխօսութեան բաց դուռ կը ձգէ: Այս հատորին մէջ կը խօսուի, կրկին, վկայութիւններու, անոնց արժեքին ու վաւերականութեան մասին: Կայ նաեւ անմիջական եւ ժամանակակից խնդիր մը. Հրեական Ողջակիզման եւ Հայկական Ցեղասպանութեան քաղաքատեսիլներ: Համայնի կարծիքը, ոչ առանց հիմնաւորումի, այն տպաւորութիւնը ունի, որ Ողջակիզման տարրուրթիւնը եւ նշանակութիւնը չնուազեցնելու համար Հայկական Ցեղասպանութիւնը իբրեւ այդպիսին ընդունելու խնդրողներ կը ստեղծուին նոյնիսկ հրեաներու կողմէ, վերաբերում՝ անկասկած Իսրայէլ-Թուրքիա քաղաքական գործակցութեամբ բացատրուող, որուն արտայայտութիւնը եղաւ Նոյեմբերի մրցանակի դափնեկիր Միսն Փերէսի սխրեցնող յայտարարութիւնը՝ ուրացման համագործ, որ քննադատուեցաւ նոյնիսկ հրեայ պարկեշտ մտաւորականներու կողմէ:

Այս հատորին տարբեր գլուխներուն տակ կը բացատրուի խիստ կարեւոր երեւոյթ մը, որ դասական ըմբռնումը՝ Ցեղասպանութիւնն է 1915 վերատեսութեան կ'ենթարկէ, այդ թուականէն առաջ եւ ետք տարածուող ժամանակը ներառուելով, ԺՊ. դարը եւ Մուսթաֆա Քեմալի ցեղային մարքայործումները՝ հայերու, յոյներու, ասորիներու, հալաբոյ՝ որ չէ կասած, երբ նկատի կ'ունենանք, որ նոյնիսկ Լոզանի դաշնագրով սահմանուած նուազագոյն անգամ մաս առ մաս կը կրճուի: Այդ թուականէն առաջ, քարոզչութեան ծառայող օսմանցիներու վերագրուող ճանդուրժողութիւնը հարցականի տակ կ'առնուի, քանի որ իսլամացման եւ թրքացման քաղաքականութիւնը վարած են թուրք վարիչները, կազմակերպած են գազաուծային շարժեր: Փիեռ Քիլյարի վկայութիւնը այս մասին ամբաստանագիր է:

Անդրադարձ կայ նաեւ Իքթիհատի դեկլարացիոն 1919ի դատավարութեան մասին, որուն աւարտին վիճակներ արձակուեցան, քանի մը անգամ կրեցին իրենց պատիժը, բայց գլխաւոր պատասխանատուներ իրենց օձիքը ազատեցին եւ ռազմականերով փոխադրուեցան ուրիշ երկիրներ, ուր ապաստան գտան: Եթէ օրէնքի ճամբով չպատժուեցան, հայեր իրենք արդարահատոյց եղան՝ յանուն իրենց գոհուած հայրերուն, մայրերուն, եղբայրներուն, ըզրբերուն: Իրաւագետներ հաւանօրէն հարկ է քննեն այս դատավարութիւնը ու վիճակները օրինական նախընթաց նկատելու, jurisprudence դարձնելու խնդիրը:

Յաճախ ակնարկութիւն կ'ըլլայ 1920ի Սեւրի եւ 1923ի Լոզանի դաշնագրիներուն մասին: Իրապէս, օրէնքը կրճալ թոյլատրելի առաջինը փոխարինել երկրորդով կամ հաշտեցնել անժամանցելիութիւնը (imprescriptibilit ) եւ յետադարձ ուժը (r troactif):

Ուսումնասիրական այս հատորը կը հաստատուէ նաեւ կարեւոր ուրիշ երեւոյթ մը: Հայկական Ցեղասպանութեան նկատմամբ մօտեցումը վկայութեան եւ վաւերագրական մակարդակէն անդին կը նուաճէ նոր հանգրուան մը՝ իր արտայայտութիւնը գտնելով արուեստին մէջ՝ քաւորուն, շարժապատկեր, եւ անոնցմէ առաջ՝ նկարչութիւնը եւ երաժշտութիւնը:

Ուսումնասիրութեան եւ ըմբռնումի հրաւիրող տեսակ մը հանրագիտարան է այս հատորը, որ հեռագրական ոճով հետաքրքրութիւն գոհացնելու միտում՝ չունի:

Յ. ՊԱՆԵԱՆ

# «ՁԵՐ ԿԵԱՆՔՆ ՈՒ ՎԱՐՔԸ ՕՐԻՆԱԿ ԹՈՂ ԸԼԼԱՆ ԱՅՍ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ»

Արամ Ա. կաթողիկոս Կիրակի, 18 Մայիս 2003ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ կատարած Ծայրագոյն վարդապետութեան աստիճանի տուչութեան աւարտին տուաւ իր հայրապետական պատգամը: Շայրական այս խօսքը մամուլի հրատարակութեան կը յանձնենք իբրեւ հայ եկեղեցւոյ բարեկարգութեան առաջնորդող ուղեցոյց:

Մայիս ամիսը Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան կեանքին մէջ ձեռնադրութիւններու, տուչութիւններու ու շնորհաբաշխումներու շրջան մըն է՝ իր իւրաքանչեւ խորհուրդով, հոգեպարար միջնորդողով ու խոր թելադրականութեամբ: Հետեւաբար ո՛չ միայն ձեռնադրուողներուն, այլ նաեւ ձեռնադրուածներուն համար այս շրջանը առիթ մը պէ՛տք է դառնայ՝ ինքնահայեցողութեան, ինքնաքննութեան ու վերանորոգութեան:

Մարդկային կեանքին մէջ գործող որեւէ՛ կառոյց կամ հաւաքականութիւն կը մնայ կենսունակ, երբ իր կեանքը ապրի ու առաքելութիւնը իրագործէ ինքնաթեւոտումով ու ինքնասրբազորումի մնայուն ընթացքի մը մէջ: Տիեզերքին մէջ չկայ գոյութիւն, որ իր վերջնական ձեւը ստացած ըլլայ. ամէն ինչ ըլլալու, կազմաւորուելու ու վերանորոգուելու ընթացքի մէջ է: Այսպէ՛ս պէ՛տք է ըլլայ նաեւ մարդուն կեանքը: Այսպէ՛ս պէ՛տք է ըլլայ մանաւանդ առաքելութեան մը համար՝ Քրիստոսի կողմէ՛ աշխարհ զրկուած հոգեւորականին կեանքը:

Արդարեւ, հոգեւորականը տարբեր անձ է ու պէ՛տք է ըլլայ. տարբեր՝ իր մտածելակերպով, գործելակերպով ու կենցաղակերպով. տարբեր՝ իր կեանքի շրջագիծով, իր առաջնահերթութիւններով, իր կոչումով. տարբեր՝ իր կեանքի որակով: Վա՛յ այն հոգեւորականին, երբ այդ որակային տարբերութիւնը չի զգար եւ իր վարքագիծով զայն չի զգացնիր իր շրջապատին: Ձեռնադրութեամբ հոգեւորականը կը դառնայ նոր մարդ՝ Սուրբ Հոգւոյն շնորհներով պայծառակերպուած: Երբ կարգաւոր հայ եկեղեցւոյ նուիրապետական կարգի գանազան աստիճաններու յատուկ ձեռնադրութիւններու աղօթքները, պիտի տեսնանք, թէ՛ անոնք չորս գլխաւոր առանցքներու շուրջ խմբուած են: Այդ առանցքները եւ կ'ուզեմ չորս բառերով արտայայտել՝ հաւատք, հաւատարմութիւն, ուսում եւ ծառայութիւն: Ասո՛նք պէ՛տք է կազմեն նոր մարդ՝ գործող եկեղեցւոյ սպասարկին կեանքին հէնքը եւ առաքելութեան ուղեցոյցը:

Սա պահուել կը հրաւիրեմ մեր եկեղեցւոյ առաքելութեան լծուած մեր հոգեւոր մշակները ինքնաքննական մօտեցումով խորհրդածելու այս մասին:

\*\*\*

Ա) Հաւատք. հաւատքը քրիստոնեայ մարդուն կեանքին կենսանիւթն է: Քրիստոնեայ ըլլալ կը նշանակէ հետեւել Քրիստոսի ու մանաւանդ ապրի՛լ Քրիստոսով աշխարհին յայտնուած ճշմարտութիւնները, սկզբունքներն ու արժէքները: Որքա՛ն դժուար է, հետեւաբար, քրիստոնեայ ըլլալ. որքա՛ն դժուար է մանաւանդ հաւատքի քարոզչիչը դառնալ: Հոգեւորականը այն անձն է, որ կոչուած է կեանքով ու դործով գրիստոս կառանելու որպէս իր կեանքի բացարձակ ճշմարտութիւնը, գրիստոս նկատելու իր կեանքի միակ ճանապարհը, գրիստոս ընդունելու իր կեանքին Ալֆան ու Օմեկան: Դիւրին է այս քարոզչիչը, սակայն դժուար՝ կատարելը: Քիչ առաջ աղօթքին մէջ ըսելու. «Ինչ որ քերական կը քարոզես, պէտք է գործն ու ցոյց տաս»: Հաւատացեալը հոգեւորականի կեանքին մէջ պէ՛տք է տեսնէ Քրիստոսի ներկայութիւնը: Ան պէ՛տք է դառնայ կամուրջ՝ հաւատացեալը դէպի Քրիստոս առաջնորդող, այլ խօսքով, ինչպէս կ'ըսէ Ձեռնադրութեան Մաշտոցը՝ «ծուռները ուղղութեան քերպոյ», «պիղծերը սրբող», «մեղաւորները արդարացնող», «աղէտները իմաստուն դարձնող», «անօրէնները Աստուծոյ օրէնքին հրաւիրող»:

Հարց կու տամ. մեր եկեղեցւոյ հոգեւորականները որքա՞ն՞ վ կ'ապրին քրիստոնէական հաւատքը. որքա՞ն՞ մասնակից են մեր եկեղեցւոյ հաւատքի կեանքին ու վկայութեան: Մեր հոգեւորականները ընդհանրապէս դարձած են ծխակաւտար եւ իրենց կեանքը լեցուն է առաքելաբար վարձական պատասխանատուութիւններով: Հաւատքի կեանքը սկսած է դառնալ լուսանցքային եւ առօրեայ կեանքի մանրուրէնները սկսած են դառնալ տիրապետող հոգեւորականի կեանքին մէջ: Այս վիճակը չվերադրենք ներկայ ընկերութեան կեանքի պայմաններուն: Հաւատքը կարելի է ապրիլ բոլոր պայմաններուն մէջ. կարեւորը ձեւը կամ տեղը չէ, այլ՝ խօսքը, ոգին, յանձնառութիւնը: Ձեռնադրութեան ընթացքին յաճախակիօրէն կը ինչեցուի, թէ՛ հաւատքով գորացած հոգեւորականը իր սպասաւորութիւնը կոչուած է կատարելու եկեղեցւոյ. ան հաւատքի քարոզիչը, պաշտպանը ու ախոյեանը կոչուած է դառնալու: Առաջին դարու քրիստոնեաները հաւատքով մղուած՝ գազաններու առջեւ նետուեցան: Ներկայ աշխարհի գազանները ռազմազան են ու այլազան եւ աւելի՛ սարսափազդու. գազաններ, որոնք կը փորձեն հաւատքը, հոգեւորը, բարոյականը, արժէքը սպաննել մարդուն մէջ: Պատրաստ են մեր հոգեւորականները նոր օրերու գազաններուն առջեւ նետուելու եւ հաւատքով զինուած պաշտպանելու գրիստոս, իր Աւետարանը, իր ճշմարտութիւնը, իր Թագաւորութիւնը: Այս կը նշանակէ հաւատք ունենալ եւ ա՛յս է հոգեւորականի կոչումը:

Բ) Հաւատարմութիւն. ձեռնադրութեան ընթացքին յատուկ տեղ տրուած է նախնեզօքի՛ ըլլող այն հերետիկոսներուն ու աղանդաւորական շարժումներուն ուղղուած, որոնք անցեալին փորձած են Քրիստոսի եկեղեցին հալածել, անոր դիմագիծը աղարտել եւ սկզբունքները չարափոխել: Եւ ապա կարեւոր տեղ յատկացուած է հաւատարմութեան՝ բոլոր այն եկեղեցւոյ հայրերուն, եկեղեցական ժողովներուն եւ դաւանական ուսուցումներուն նկատմամբ, որոնք դարբերու ընթացքին թուրեղացուցած են ու պաշտպանած՝ եկեղեցւոյ վարդապետութիւնը եւ հոգեւոր ու բարոյական սկզբունքները:

Հաւատարմութիւնը կենսական տարածքներէն մէկն է քրիստոնեայ մարդուն կեանքին ու գործին: Հաւատքը պէ՛տք է հաւատարմութեամբ թարգմանել: Այսպէ՛ս պէ՛տք է ըլլայ մանաւանդ հոգեւորականի վարքագիծը: Հաւատարմութիւնը պէ՛տք է դառնայ իր կեանքին ուղեցոյցը ու ծառայութեան սկզբունքը: Անցեալի արժէքներուն, աւանդութիւններուն եւ ուսուցումներուն նկատմամբ հաւատարմութիւնը չէ կարող չլինել հոգեւորականի կոչումը, շարունակականութիւնը ու իւրաքանչեւ ինքնութիւնը պահելու իմաստով:

Հայ հոգեւորականը անցեալի ժառանգութեան հաւատարիմ պահելու պէ՛տք է դառնայ՝ մանաւանդ անցեալ, ինքնութիւն ու արժէք անտեսող համաշխարհայինացումով վտանգներուն դիմաց: Ան պէ՛տք է թոյլ տայ, որ հիմնական շեղումներ կատարուին մեր եկեղեցւոյ դաւանարանական կեցուածքէն, աստուածաբանական մտածողութեանէն, ծիսական կառոյցէն, կանոններէն ու աւանդութիւններէն, ինչպէս նաեւ՝ մեր եկեղեցւոյ ոգիէն, խորհուրդէն ու ինքնութեանէն: Սակայն, հաւատարմութիւն անցեալին, չի՛ նշանակել սոսկ անցեալի պահպանումը: Աւանդապահութիւնը կենսական է, սակայն աւանդապահութիւնը բացասական երեւոյթ է: Եկեղեցին, որպէս ընկերութեան կեանքին մէջ ապրող ու վկայող աստուածամարդկային հաստատութիւն, պէ՛տք է շարունակ վերանորոգուի: Հայ հոգեւորականը անցեալին

նկատմամբ իր հաւատարմութիւնը վերահաստատելով՝ հանդերձ, նո՛յն հաւատարմութեան մղուած՝ ան պէ՛տք է մեր եկեղեցին տանի մեր ժողովուրդին, րանայ աշխարհին, վերանորոգէ զայն նոր արիւն ու շունչ տալով անոր: Այս է հաւատարմութեան ճշմարիտ հասկացողութիւնը:

Գ) Ուսում. դարձեալ ձեռնադրութեան ընթացքին կը շեշտուի ուսման առանցքային կարեւորութիւնը՝ ձեռնադրուողին համար: Ուսում ըսելով եւ կը հասկնամ հոգեմտաւոր կազմաւորում: Չեմ կրնար երեւակայել հոգեւորական մը՝ առանց հոգեմտաւոր լուրը կազմաւորման: Որեւէ կազմակերպութեան պատկանող անձ իր կազմակերպութեան առնչուած գիտելիքներու ու սկզբունքներու ամբողջական ճանաչումը պէ՛տք է ունենայ: Հոգեւորականի պարագային խիստ անհրաժեշտ է, որ ան Աստուածաշունչի, եկեղեցւոյ պատմութեան, աստուածաբանութեան, եւ եկեղեցւոյ կեանքին կապուած այլ երեսներու ու հարցերու համապարփակ ու խոր ճանաչումը ունենայ, որպէ՛սզի կարենայ աստուածգիտութեամբ զօրացած, Ձեռնադրութեան Մաշտոցին բառերով՝ «մարդիկը որսալ մեղքի ծովէն, դուրս բերել տգիտութեան խաւարէն եւ լուսաւորել գիտութեամբ, բարի գործերով եւ պատուիրաններու նառագայքներով»:

Կազմաւորումը միայն դպրոցէն չի գար: Ան կարողուլ, առնելու, սերտելու, ուսումնասիրելու, այլ խօսքով, ինքզինք միշտ աշակերտ նկատելու մնայուն ճիգ մըն է: Հոգեւորականը եղածով կամ ունեցածով պէ՛տք է բաւարարուի իր ողջ կեանքը հոգեմտաւոր ինքնահարցման մնայուն ընթացք մը պէ՛տք է դառնայ: Ու հոգեմտաւոր կազմաւորման ցուցանիշը վկայականը չէ՛ երբեք: Ի՛նչ կ'արժեն ուսում ու վկայական, երբ անոնք կեանքին մէջ ծառայութեամբ չեն թարգմանուիր: Հայ հոգեւորականին համար ուսումը ինքնասպասակ չէ: Յատկապէս այսօրուան աշխարհին մէջ հոգեւորականը պէ՛տք է մտաւոր լուրը պատրաստութիւն ունենայ, որպէ՛սզի կարենայ երկխօսութեան մէջ մտնել նոր սերունդին հետ. ան այսօրուան աշխարհը պէ՛տք է լաւ ճանչնայ, որպէ՛սզի կարենայ եկեղեցին ներկայ աշխարհին պայմաններուն համապատասխան կերպով բանալ ժողովուրդին. ան խոր ճանաչումը պէ՛տք է ունենայ Աստուածաշունչին, հայ եկեղեցւոյ աստուածաբանութեան, դաւանանքին ու հայրաբանութեան, որպէ՛սզի կարենայ ներկայ ընկերութիւնը լուրջ հարցերուն շուրջ մեր եկեղեցւոյ ուսուցումները եւ տեսակէտները պարզել այսօրուան հայ մարդուն:

Դ) Մտաւայութիւն. հաւատք, հաւատարմութիւն եւ ուսում իրենց վաւերական արժէքը կը ստանան ծառայութեամբ միայն: Փառք, հաճոյք եւ երկրաւոր այլ երեւոյթներ ու ցանկութիւններ չեն կրնար հոգեւորականի կեանքին մայր էջը դառնել: Քրիստոս ինք, ինչպէս Աւետարանը կ'ըսէ, ծառայութիւն ստանալու չեկաւ, այլ՝ ծառայելու (Մր 10.45): Քրիստոսի ինչնախնութիւնը, հօգրութիւնը, մեծութիւնը իր ծառայութեան մէջ էր: Եկեղեցին հայածանքներու ու փոթորիկներու դիմաց մնաց կանգուն ու զօրեղ իր ծառայութեամբ միայն:

Հոգեւորականը Քրիստոսի կողմէ աշխարհ զրկուած առաքել է. անոր կոչումը ծառայութիւն է միայն: Մտաւայութիւնը կը նշանակէ «քաջ հովիւ»՝ օրինակով իր անձը նոյնապէս իր հօտին հետ: Մտաւայութիւնը կը նշանակէ Աստուծոյ խօսքը քարոզել իմաստութեամբ, գիտութեամբ ու քաջութեամբ, ոչ թէ՛ մարդոց հանելու իր սիրելի ըլլալու համար, այլ՝ Աստուծոյ, ինչպէս Ձեռնադրութեան աղօթքը կը յիշեցնէ:

Մտաւայութիւնը դժբախտաբար սկսած է հայ հոգեւորականի կեանքին մէջ որակ, դիմագիծ եւ ուղղութիւն կորսնցնել: Ան սկսած է դառնալ ձեւական, պարագայական ու մակերեսային: Այսօր հոգեւորականը ընդհանրապէս աւելի կը զբաղի իր անմիջական կեանքին կապուած անտեսանալի հարցերով, իր կեանքի բարօրութեան առնչուած խնդիրներով, իր փառասիրութիւնը շոյող ու իր հանգիստը ապահովող աշխատանքներով, քան թէ՛ իր ծառայութեան աւելի որակ ու ծաւալ տալու միտող մտահոգութիւններով եւ ծրագրերներով: Երբ ծառայութիւնը կորսնցնէ իր վաւերականութիւնն ու առաջնահերթութիւնը եւ դառնայ լուսանցքային հոգեւորականի մը կեանքին մէջ ու հոգեւորականը կը դառնայ սոսկ պաշտօնեայ: Աւելի քան երբեք այսօր հայ հոգեւորականը կոչուած է իր ողջ կեանքը արժեւորելու ծառայութեամբ միայն: Հո՛ս է իր արժէքը, հօգրութիւնը, մեծութիւնը:

\*\*\*

Այսօր մեր եկեղեցին կը գտնուի լուրջ մարտահրաւէրներու դիմաց ու իր մարդուքի ու առաքելութեան վերանորոգումը անյետաձգելի պահանջ մըն է: Յաճախ կը խօսինք Հայ Եկեղեցւոյ բարեկարգութեան կենսական անհրաժեշտութեան մասին: Անհրաժեշտ է միաժամանակ խօսիլ հայ հոգեւորականի բարեկարգութեան մասին, որ նո՛յն առաջնահերթութեամբ այսօր կը ներկայանայ մեզի: Հայ Եկեղեցւոյ բարեկարգութիւնը կը սպոյ հայ հոգեւորականի բարեկարգութեամբ:

Ցեղասպանութեանց ետք թէ՛ Հայաստանի եւ թէ՛ Ափիւլքի մէջ հայ հոգեւորականի պատրաստութիւնը նուազ կարեւորութիւն ստացաւ մեր կեանքի այլ հրամայականներուն դիմաց: Անհրաժեշտ է հիմա, որ մեր եկեղեցին բարձրագոյն աստիճանի նախանձախնդրութիւն ցուցաբերէ հոգեւորականի ընտրութեան ու կազմաւորման գծով: Մենք այլեւս մեր հոգեւոր դասու քանակին պէ՛տք է կարեւորութիւն տանք, այլ՝ որակին: Մեր եկեղեցին պահողը, վերանորոգողը, պայծառացնողը, որակ ունեցող հոգեւորականները պիտի ըլլան: Ու որակ ըսելով եւ կը հասկնամ՝ խոր հաւատք, ամբողջական հաւատարմութիւն, հոգեմտաւոր լուրը կազմաւորում, գիտակից յանձնառութիւն, ամբողջանուրժ ծառայութիւն: Եթէ՛ այս արժէքները պակսին հայ հոգեւորականին մօտ, անիկա իրաւունք չունի ծառայութեան կոչուելու մեր եկեղեցւոյ նուիրական անդատանին մէջ: Սուրբ է հոգեւորականի կոչումը եւ այդ սրբութիւնը որպէս մնայուն ձգտում պէ՛տք է ճառագայթէ հոգեւոր սպասարկին կեանքէն ու ծառայութեանց:

Աշխարհ փոխուած է. մեր ժողովուրդը դարձած է պահանջկոտ. նոր սերունդը մեծ սպասումներ ունի եկեղեցիէն: Եթէ՛ մենք չունենանք կոչումի խոր գիտակցութիւն ունեցող հոգեւորականներ, եթէ՛ մենք չունենանք հոգեմտաւոր լուրը կազմաւորում ունեցող հոգեւոր սպասարկներ, մեր ժողովուրդը պիտի հեռանայ եկեղեցիէն ու եկեղեցին պիտի դառնայ սոսկ աւանդատուներ անցեալի մեր սրբազան արժէքներուն: Ձեռնադրութեան աղօթքը կ'ըսէ. «Ձեր կեանքը ու վարքը օրինակ յայսօրուան եւ նաեւ վաղուան հայ հոգեւորականին»:

Այս գիտակցութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը իր Դպրոցներով պիտի շարունակէ առաւել խստապահանջութեամբ հոգեւորական մարդու կազմաւորման իր առաքելութիւնը:

Այս նախանձախնդրութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը իր միարանութեամբ պիտի շարունակէ առաւել ն



# Աշակուրային Էջ

## ՔԱՆԱՏԱՆԱՅ ԿԵՐՊԱՐՈՒԵՍԱԳԵՏԵՐ

### ԱՐԹ-Օ ՉԱՔՄԱՔԾԵԱՆ

Մոնրէալ, Մարտ 2003:

Հակառակ դարձանամուտ ըլլալուն, ցուրտը տակաւին սիւպերիական սառնամաքիքները կը յիշեցնէր ֆանտաստի մէջ: Հակառակ ժամանակի սղուծեան ու բազմազգ ըլլալու, կ'որոշեմ անպայման հանդիպիլ Արթօ Չաքմաքճեանին: Յանկուծիւնս կը յայտնեմ քանատահայ ճարտարագետ եւ շինարար Մկրտիչ Վառվառեանին, որ անմիջապէս կը համաձայնի հասցնել զիս Արթօ Չաքմաքճեանին քով՝ որեւէ օր եւ որեւէ ժամուկ, որ ինծի կը յարմարի: Ծանապարհին ի յայտ կու գայ, որ Մկրտիչ Վառվառեանը ոչ միայն արուեստասէր է, այլ նաեւ յատուկ ակնածանք կը տածէ Չաքմաքճեանին հանդէպ, մանաւանդ մեծապէս կը գնահատէ Մոնրէալի մէջ զետեղած անոր Եղեռնի յուշարձանը: Երբ կ'ակնարկեմ, թէ Չաքմաքճեանի արուեստին բանային Եղեռնն է, ան կը խոստանայ յարմար օրն իսկ զիս տանիլ նաեւ Եղեռնի յուշակոթողը տեսնելու: Ուսումնասիրելի Չաքմաքճեանի ընկալարանը կը հասնինք Երեկոյան ժամը 7:00 անց Դուռը ինք կը բանայ եւ կ'ողջագուրուինք հին մտերիմներու նման:



Երբ յայտնեցի ինձ: Ան կը սկսի տեղեկութիւններ եւ բացատրութիւններ տալ իր ամենահին գծանկարներէն մինչեւ իր նորագոյն քանդակները, որոնք բոլորն ալ անբախտելիօրէն կապուած են իրարու: Արթօն ի ստեղծագործական անցած ճանապարհը թէեւ արտաքինապէս յստակ է ու պարզ, սակայն էպիկական բարդ է ու խիստ կարեւր կը զգացուի լրջօրէն ու սուսնասիրելու վերլուծելու: Ունի գլուխ-գործոց ստեղծագործութիւններ, ինչպէս՝ «Կոմիտաս», «Հիրոշիմա», «Նարեկացի», «Ողբ», «Ժիչ», «Մտածող» եւ ուրիշներ, որոնց մասին կարելի է առանձին մենագրութիւններ գրել:

Անոր ամենափոքր ու ամէնէն աննշան համարյառող քանդակն իսկ յա-

կան կեանքին զուգահեռ կը գրողի մանկավարժական աշխատանքներով: Եւ չըջան մը կը մասնակցի նաեւ Ակադեմիայի հնագիտական հետազոտութիւններուն, խորհրդատուի հանգամանքով: Ան 1975ին կը մեկնի Քանադա: Հոս՝ Մոնրէալի մէջ, իր ստեղծագործական կեանքին զուգահեռ կը զբաղի նաեւ մանկավարժութեամբ, իբրեւ արուեստի դասախօս:

Ան ցարդ արժանացած է միջազգային մրցանակներու, որոնց շարքին՝ 1965ին խորհրդային Միութեան «Հիրոշիմա»ի համար սահմանուած առաջին մրցանակը եւ կամ 1984ին Մոնրէալի Փլաս տէզ «Արի Ուիլքինս Փելլէթ-թէյ»ի անուան սոսկեմեծ տալը: Անոր գործերը ցուցադրուած են Եւրոպայի եւ ամերիկեան բազմաթիւ կեդրոններու մէջ, ինչպէս նաեւ «Լուվր»ի (Փարիզ), «Միգիլ» Պոնտիակ (Ֆրեմանիա), «Միւզէ Թրէթիք» (Մոսկու) նման թանգարաններու մէջ: Ունի կարգ մը յուշարձաններ, գեղարուեստ՝ Մոնրէալի, Տիթրոյի, Ուաշինկթընի Տի. Սի. Յի. Նիւ Ճրոքի եւ այլ բաղադրանքներու մէջ: Արթօ Չաքմաքճեան դիմաքանդակի բացառիկ վարպետ մըն է: Անկախ հայ դէմքերէ (Առսու Պապաճանեան, Կոստան Չարեան, Մարուսիան Մոսիսի Տէր Գալուստեան), իրագործած է նաեւ միջազգային դէմքեր (Հիւլիոս Արիս, Սըր Փիթըր Մէտէուար, եւ ուրիշներ), որոնք իր տաղանդին եւ ինքնատուրութեան զբաւականն են:

Թէեւ Արթօ Չաքմաքճեանի արուեստը ունի գանազան երեսներ, (որոնց մասին հարկաւոր է անդրադառնալ առանձին), այնուամենայնիւ իր արվեստի հէջը եղած է ու կը մնայ Եղեռնի թեման: Ուղղակիօրէն իբրեւ Եղեռնի յուշարձան ան ունի երկու ստեղծագործութիւն: Առաջինը գետեղուած՝ Մոնրէալի մէջ, իսկ երկրորդը տակաւին կը մնայ իր մօտ, իբրեւ չիրականացած երգ: Այս մէջ կը կը ներկայացնէ տիեզերքը, որուն կեդրոնը տառապած ու անիրաւուած մարդն է, որուն գլխուն վրայ սակայն տակաւին վտանգը առկա կը մնայ դամոկլեան ժանգոտած սուրի նման: Այս յուշարձանը գլուխ-գործոց եւ ուրիշ յղացք մըն է, գոր կարելի է աշխարհին ներկայացնել իբրեւ բռնութեան դէմ ծառայող մշակութային խորան:

Տրուած ըլլալով որ այս մեծատաղանդ կերպարուեստագէտին արուեստը գրեթէ անծանօթ կը մնայ հայ գեղարուեստասէր հասարակութեան համար, անոր արուեստի տարբեր ծախքներն, ի մասնաւորի Եղեռնի թեմային պիտի անդրադառնանք պարբերաբար եւ տարբեր առիթներով:

ՄԱՍԿՈՒՄ ԵՐԿՈՒՇ

### Չափագնացորէն տառապած, քիչ գնահատուած, այս պատճառով ալ նուազ գնահատուած հայ տաղանդաւոր գեղանկարիչներէն է Ժիրայր Օրագեան: Հայրենի մամուլէն բազում եւ ստորեւ տրուած յօդուածը ընդհանուր գաղափար մը կու տայ մեզի անոր ստեղծագործական կեանքին մասին:

«Դիտելով Ժիրայր Օրագեանի կտակները, հիացմունք եւ գոգմ նրա իւրօրինակ, անկրկնելի ունիք եւ կատարման բարձր վարպետութիւնը: Ու միաժամանակ փոստում, որ այդ արուեստը երբեք չի ընդունուի Իտալիայում, քանի որ ամբողջութեամբ ներթոնուած է եղեռնի տրամադրութեամբ եւ քախիծով»:

#### Նկարիչ Վերդունէ

«Արտակարգ խառնուածքի տէր Եկարիչ: Առեղծուածային մարդու ցնցող արուեստ»:

#### Իրաւական մամուլի էջերից

«Ժիրայր Օրագեանը ներկայացնում է իրական կեանքից պատկերներ, վրձնահարուածը յստակ է, ճշգրիտ: Նրա պատկերները լինելու են երեւակայութեամբ, որը գալիս է ներքին մղումից, բախտոտ, անգուսպ երազանքներից: Տիրութիւնը, հոգեկան ցնցուցանքը, նրա խառնուածքի խորը շեշտադրումները հետագայում նաեւ կը դառնան Օրագեանի արուեստի հոգեբանական վերլուծման համար»:

#### Գուիգո Պերոկո

«Պերոկոն յիշել, որ Եկարիչը հայ է: Օրագեանի հաւատքը անդադար է: Ումանք յօսում են տարբեր ուղղութիւններից, ազդեցութիւններից, բայց դա արուեստի միայն պիտակներն են: Նախընտրում են տեսնել իսկական հայ արուեստագետի գործերը՝ ինչպիսիք են Օրագեանի ստեղծագործութիւնները: Նրա արուեստը մի ցոր ըմբռնողութիւն է մեզ համար»:

#### Վերջինից Գուիգո

«Ամբողջ կեանքս եղել է մի մեծ պայքար ամէն տեսակետից: Իւրաքանչիւր ցոր գործ ինձ համար տառապանք է: Չեմ գոհանում եղածով եւ միշտ ինձնից ասելի յաւնեմ պահանջում: Աւելի լաւը կարելի է ստեղծել միայն առաւել առաջգիմելով, կատարելագործելով: Միշտ պատրաստ եմ պայքարել եւ կարծում եմ առանց պայքարի կեանք գոյութիւն չունի»:

#### Ժիրայր Օրագեան

Ո՞վ է այս նկարիչը, որի մասին այսքան տարբեր կարծիքներ կան: Նկարիչ, որն իրօք նայում է այս մեծ աշխարհին իր՝ օրագեանական աշխարհից, գտնում կերպարները, դարձնում նրանց օրագեանական բովանդակութեամբ եւ առանց ընկճուելու 40 տարի շարունակ ասել է միայն իր խօսքը: Օրագեանը աշխարհին, կեանքին նայելով՝ տեսարաններ, պատկերներ յայտնաբերեց, որոնք մինչ այդ ուրիշին հասու եւ տեսնելի չէին: Ու դիտողը երբեք չէր մտածի, որ այդ կերպ էր կարելի զգալ, տեսնել: Երբեք այս կերպ է մարդկային հոգու տանջանքը, տուժալից վերափոխումը ներշնչանքի եւ ներթոնում երեւակայութեան այն միջավայրը, որն իր լինելիութեան հիմքն է: Դիտելով Ժիրայր Օրագեանի կտակները, մարդ մտնում է բոլորովին նոր յայտնաբերած արուեստի աշխարհ: Դեռ երբեք չզգացնում, շարտայայտում:

Օրագեան նկարիչն այն եզակիցներից է, որոնց արուեստը քիչ թէ շատ ընդօրինակելի, կրկնել անհնար է: Այնքան ինքնատիպ է, որ ազդուելու առաջին իսկ փորձից մատնում երեւակայութեան լինելը: Օրագեանն նկարիչն ինքնատիպ է բառի առաւելագոյն իմաստով, որովհետեւ նախ՝ անկրկնելի է ինքը՝ Օրագեան մարդը: 40 տարի ապրել Հոռոմում, շրջապատուած լինել «իզմ»երով, ուղղութիւններով, հազար ու մի մտայնիկ, անցողիկ պիտակակիր խմբաւորումներով, եւրոպական կեանքի դրուածքով, ժամանակակից կեանքի աղմուկով, մթնոլորտով ու մնայ... հայ: Պոստեցի հայ: Միշտ մնալ իր ժողովրդի ապրած, կրած տառապանքի, սարսափի տակ: Հոռոմում բնակուելով՝ երազել հայկական գիւղի, աւանդական ընտանիքի նահապետական սովորութիւնները: Իր կտակներում պատկերել հայ, միասնական, համերաշխ ընտանիք, որ երբեք չի ունեցել: Ապրել մի քողտկուում, իր իսկ ասելով «ախոռում», որն իր համար եւ աշխատասենեակ էր, եւ ննջարան, եւ խոհանոց, ուր աթոռն անհնար էր տեղից շարժել տեղի պակասի պատճառով: Չվաճառել ոչ մի գործ, քանզի իւրաքանչիւր ստեղծագործութիւնն անդնահատելիօրէն թանկ էր իր համար: Իր քողտկարի պատից կախած էր միայն դեղձանիկի մի վանդակ:

Օրագեանի արուեստն իր անցած ճանապարհի տանջանքներն են, յուզմունքները, ցաւերն արտայայտելու միջոցը: Նրա ստեղծած պատկերները հանգիստ են, առանց աւելորդ շարժման, բայց՝ յանդուգն: Նրա արուեստը համարձակ խօսք է, պատակ՝ անարդարութեանը, անազնութեանը, ստորութիւններին: Նրա կերպարները խեղճած մարդիկ են, ոչ Ֆիգիբապէս... հոգեպէս, բարոյապէս, որ նայում են քեզ իրենց սուրբ, մեղադրող, ապացոյցներ պահանջող հայեացքով եւ պատասխանի սպասում: Այդ է պատճառը, որ նկարիչ Օրագեանն ասում է, որ, բոտ իրեն, նկարը պէտք է հոգեբանական լինի ու պատգամ՝ սերունդներին: Եւ ակամայ համաձայնում են նրա մտքի հետ: Ահա թէ ինչու անցեալում եւ այսօր իսկական նկարիչներն այնքան հազուադիւրս են, որովհետեւ իրօք դժուար է ստեղծել արուեստ, որը պատգամ լինի: Նայում եւ Օրագեանի

աշխարհին ու յայտնաբերում եւ պատկերներ, տեսարաններ: Ներկայացնում է դրանք իր ձեռով: Ու ոչ միայն ներկայացնում է, այլեւ ամենակարեւորը՝ պատգամում:


Ժիրայր Օրագեանը, որն Իտալիայում յայտնի էր որպէս Ժերարտո, ծնուել է 1902ին: Կ. Պոլսում: 19 տարեկան հասակում տեղափոխուել է Հոռոմ եւ 40 տարի՝ մինչեւ իր մահը, ապրում է այնտեղ: Չնայած նա իր ողջ կեանքում աշխատել է եւ ծոյլ մարդու համբաւ չի վայելել, բայց միշտ եղել է ֆրիանասական ծանր դրութեան մէջ:

Ժիրայր Օրագեանի կենսագրութիւնը երբեք ոչ մի բանով չի տարբերում հայ գաղթականի կենսագրութիւնից: Հայ մարդու ծանր ճակատագրից, որը 1900ական թուականներին, դրանից առաջ ու յետոյ էլ ճնշուել է բռնապետների կողմից, անարգուել, կորցրել հայրենի հողի վրայ ապրելու իրաւունքը, քստրուել, սպանուել, մահից մահապուրծ՝ դարձել գաղթական: Միայն ի տարբերութեամբ իր բախտակիցների, որոնք նոյնպէս օրապահիկի համար աշխատում էին Եւրոպայում մէկ ցուրտ, որպէս վարձու բանուորներ, Օրագեանը համոզուած էր, որ ինքը ստեղծուած է նկարելու համար: Սփիւռքահայ նկարիչ եւ արուեստագետ Օնիկ Աւետիսեանն ասա թէ ինչ է գրում այդ մասին: «Արա Սարգսեանը եւ եւ Ժիրայր Օրագեանի հետ ծանօթացանք 1921ին, երբ կարճ ժամանակով գտնուել էին Հոռոմում: Ժիրայր Օրագեանը նոր էր եկել Կ. Պոլսից: Անգործ բանուոր էր եւ ապրում էր այն սակաւ միջոցներով, որ ուղարկում էին ազգականները: Ոգեւորուած մեր ներկայութիւնից ու մեր կատարած մատիտանկար աշխատանքներից՝ մի օր սկսեց ինքն էլ նկարել Պինչո այդու մարմարէ կիսանդրիները: Մենք մտածեցինք, որ դա անգործ մարդու ժամանց է»: Բայց, երբ 1925ին Օնիկ Աւետիսեանը վերադարձել է Հոռոմ, այսինքն՝ չորս տարի յետոյ, շատ գրամացած լսել է, որ Օրագեանը լրջօրէն գրադուել է նկարչութեամբ: Ուսուց է հետը ու հակացել, որ դա ժամանակաւոր հրապուրանք է, այլ լուրջ գրադուել, որ Օրագեանը որոշել է ամէն գնով առաջ գնալ այդ ասպարէզում: Օնիկ Աւետիսեանի խորհրդով Օրագեանը սկսել է յաճախել Արուեստի ակադեմիայի դասընթացները: Չնայած այն բանին, որ այդ դասընթացներում Օրագեանի կատարած քայլերն ու ձեռքբերումները շատ համեստ էին, այնուամենայնիւ նա յամառօրէն շարունակում է գրադուել նկարչութեամբ: Այս պարագայի համար է ասուած նկարիչների սիրած խորհիմաստ արտայայտութիւնը՝ «Նկարիչն այն մարդն է, որը ոչ թէ յաւ է նկարում, այլ նա, ով չի կատարում չնկարելը»: Օրագեանը խորապէս համոզուած էր, որ իր կրօնը նկարչութիւնն է: Ու հրաժարուելով կողմնակի որեւէ աշխատանքից, նա յամառօրէն նկարչութեամբ էր մեծ դժուարութեամբ էր համաձայնում վաճառել որեւէ գործ: Այն հարցին, թէ ով է եղել իր առաջին ուսուցիչը, Օրագեանը միշտ նոյն պատասխանն էր տալիս: «Իմ ուսուցիչը նկարիչ չէ, այլ երաժիշտ... Պեթհոփէնն է: Նա ի կեանքի բոլոր պարուները ներդրեց երաժշտութեան մէջ, իսկ եւ անկախաբար այդ ամէնն արտայայտեցի իմ նկարչութեան միջոցով»:

Օրագեանի կենդանութեան օրօք Իտալիայում բացուել են անհասանելի մի քանի ցուցահանդէսներ՝ 1947ին եւ 1958ին Հոռոմում: Իսկ 1950 եւ 1955 թուականներին մասնակցել է Վենետիկի եւ Հոռոմի Գեղարուեստական ցուցահանդէսներին: Այդ կապակցութեամբ Իտալական մամուլը շատ ջերմ է գնահատել Օրագեանի արուեստը: «Ընտանիք», «Մանուկների խաղ», «Հանդիպում», «Երեխաներ», «Երեք ընկերուհի» կտակներն այն յաջողւած գործերից են, որոնցում նկարիչը հրաշալիօրէն կարողացել է արտայայտել հայ ընտանիքի խոր միասնութիւնն ու ջերմութիւնը եւ միաժամանակ խարստող անկեղծութեամբ ցոյց տալ աշխարհի, շրջապատի անտարբերութիւնը հայ մարդու, հայ գաղթականի նկատմամբ: Վերը նշուած ջերմութեան կողքին նա ստեղծում է «Ընկերուհիներ», «Զրոյց», «Քուն» կտակները անբնական կանաչ երանգներով, ձեւերի ընդգծումով ու շեշտադրութեամբ: Այդ գործերում ստեղծուած կերպարները հարց են տալիս դիտողին, թէ վրձնել են իրենք: Ինչպիսին էլ որ լինի հարցի պատասխանը, դիտողի մօտ կտակները յարուցում են հետեւեալ զգացողութիւնը՝ ինչպիսի կեանք էլ որ պարած լինի մարդը, նրան չի կարելի լքել: «Եղեռն» կտակը իրաւունքի սակամայ իշուում եւ Փիքասոյի նշանաւոր «Գեռնիկա»ն: Երկու գործերն էլ մերկապարանոց անկեղծութեամբ պատկերում են մարդկութեան դէմ կատարուած ոճրագործութիւնը, նրա դէմ ուղղուած հրէշաւոր մի կողորած: Եղեռնի թեման Օրագեանի գործերում չի սահմանափակուում միայն գաղթի նուիրուած կտակներով: Ինչպէս իրաւացիօրէն նշում է Իտալացի նկարիչ Վերդունէն, Օրագեանի ողջ արուեստն է ներթոնուած դրամով: Ինչ էլ որ պատկերելիս լինի՝ դիմանկար, կոմպոզիցիոն գործ, բնանկար, բոլորի մէջ էլ արտայայտուած նոյն վախը կայ, անվտանգութիւնը, սարսափ ու հրէշաւորութիւն տեսած մարդու յիշողութիւնը: Օրագեանի արուեստը բոլորի արուեստ է: Նա անտարբեր չէ մարդկանց անսահման վշտի նկատմամբ: Իր ժողովրդի հանդէպ տածած սէրն ու գորովանքը Օրագեանի մօտ համայն է դառնում: Նա կարեկցում է բոլոր ազգերի վշտակիրներին:

1966ին Օրագեանի մահից յետոյ Հայրենիքում բացուեց նկարչի ստեղծագործութիւնների անհասանելի ցուցահանդէսը, որտեղ ցուցադրուած էին անչափ հետաքրքիր, յիշարժան գործեր: Նա հարկերից աւելի ստեղծագործութիւններ ունի Երեւանի Ազգային պատկերասրահում եւ տասնեակի հասնող ինքնատիպ աշխատանքներ շայտատանի Արթի Արուեստի թանգարանում: Իւրաքանչիւր արուեստագետ աշխարհին նայում է իր տեսանկիւնից: Ինչպիսին է այդ տեսանկիւնը եւ ինչ է ասում: Դրա պատասխանն է բնորոշում, թէ ով է տրուել արուեստագետ: Ի վերջոյ ինչ եւ դու ասում այս աշխարհի մասին: Իսկ Օրագեանն նկարիչն ու Օրագեան մարդը ասում են նոյնը՝ «Կեանքը պայքար է, առանց պայքարի կեանք գոյութիւն չունի»:


ՍԵՂԱ ԲԵՔԱՐԵԱՆ



Արի Մովսէս Բան, արի, քեզ վաղուց էի սպասում...

Արթոյի ընկալարանը լեցուն էր իր ստեղծագործութիւններով եւ հնատիպ բազմաթիւ առարկաներով: Թէեւ ոչ մէկ անկիւն եւ կամ տարածք պարապ էր, սակայն սենեակները խճողուած ըլլալու տպւորութիւն չէին ձգեր, այլ կարծես թէ ամէն ինչ իր տեղն էր, այսինքն՝ Արթոյի ընկալարանը այդպէս պէտք է որ ըլլար... Ամէն ինչ ուղիղ կը համապատասխանէր կերպարուեստագէտի խառնուածքին ու մեծութեան:

Կը սկսինք երեւանեան յուշերով, յատկապէս կը յիշենք մեր ընդհանուր ընկերներն ու ծանօթները (Հենրիկ Իգիթեան, Շահէն խաչատրեան, էլիթէկեաններ, Արա Շիրազ, Արթօ Հասպուրեան, Մկրտիչ Մազմանեան, եւ այլն) եւ խօսակցութիւնը ինքնաբերաբար կ'ընթանայ արեւել-



դուներ Երեւանի Գեղարուեստական ինստիտուտի Բարձրագոյն Հիմնարկը, գոր կ'աւարտէ 1959ին, որմէ ետք ստեղծագործա-

Մարտի 2003

# ՆՈՅՆԻՍԿ ԳԵՐՄԱՆԱԳՅԻ ԱՇԿԵՐՏՆԵՐԸ ՏԿԱՐ ԵՆ

ԳԵՐՄԱՆԱԳՅԻ ԱՇԿԵՐՏՆԵՐ ՏԿԱՐ ԱՐԴԻՒՆՔՆԵՐ Կ'ԱՐՁԱՆԱԳՐԵՆ ԳՐԱՃԱՆԱԶՈՒԹԵԱՆ, ՈՒՍՈՂՈՒԹԵԱՆ ԵՒ ԳԻՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ: «ԻՆՏԵՐՆԵՏԵՆՆԵՐ ԵՐԵՎԱՆԻ ԹՐԻԴԻՒՒՆ» ԿԸ ԳՐԸ ԳԵՐՄԱՆԻՈՅ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍԱԿԱՐԳԻՆ ՄԷՋ ԲԱՐԵՓՈՒՍՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՆԵՐԱԺԵՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Փայտի առաջին անգամ անխառնաձուլված կ'անհետանան Գերմանիոյ մէջ: Գերմանացիք չեն հաւատար, թէ իրենց այնքան բարձր գնահատուած կրթական մակարդակը ինչպէս բարգաւաճ երկիրներու կրթական մակարդակը ցոյց տուող ցանկին յատկապէս իրաւունք է: Մտնողներ խուճապի մատնուած են, եւ մրցակցութեան անսպասելի վտանգ մը ստեղծուած է, մինչ աշխարհը հետզհետէ աւելի կը խորանայ տեղեկատուութեան դարուն մէջ:

«Ասիական հաստնեցող ապագայի հարց է, սակայն, իրականութեան մէջ, նաեւ ամբողջ ընկերութեան մը ապագային հարցը», կ'ըսէ Գերմանիոյ կրթութեան նախարարութեան մէջ ծրագրող մը՝ Հանս-Քրիստոֆ Բոլ: «Ասիական հաստնեցող ապագայի հարց է, սակայն, իրականութեան մէջ, նաեւ ամբողջ ընկերութեան մը ապագային հարցը», կ'ըսէ Գերմանիոյ կրթութեան նախարարութեան մէջ ծրագրող մը՝ Հանս-Քրիստոֆ Բոլ:

Կրթութեան նախարարութեան պաշտօնէութիւնը «գիշեր ցերեկ» կ'աշխատի Պերլինի մէջ՝ մանկապարտէզներու, դպրոցներու եւ համալսարաններու բարեկարգումին համար, թէեւ կը խոստովանի, թէ պետութիւնը նիւթական բաւարար աղբիւրներ չունի արմատական լուծումի մը համար: Կրթութեան նախարար էտշլիարտ Պոլ-մասն կը նախատեսէ, թէ ամբողջ տասնամեակ մը կ'ընայ տեւել երկիրին դպրոցները ամէնէն յառաջիկայ 15 կամ 20 տարիներու մակարդակին հասցնելը:

Փարիզի մէջ հաստատուած Տնտեսական Գործակցութեան եւ Բարգաւաճումի կազմակերպութեան կողմէ վերջին 14 ամիսներուն կատարուած իրենց յարգող ուսումնասիրութիւններէ ետք ի յայտ եկած է, թէ Գերմանիոյ կրթական մակարդակը տկար է: Աշակերտներու արժեւորումի միջնակարգ ծրագիրը ցոյց տուած է, թէ 15 տարեկան գերմանացիներ 21րդ դերքը կը գրաւեն բարգաւաճ 32 երկիրներու ցանկին մէջ եւ բաւական ետ են Բրիտանիոյ, Ճապոնի, Հարավային Քորէայի եւ ընդհանրապէս եւրոպական այլ երկիրներու աշակերտներէն: Աւելին՝ գերմանացի աշակերտները գրաճանաչութեան, ուսողութեան եւ գիտութեան մէջ «նկատուելի կերպով նուազ արդիւնք արձանագարած են Տնտեսական Գործակցութեան եւ Բարգաւաճումի կազմակերպութեան պահանջած չափանիւներէն»:

Ամբիւնացի աշակերտներ աւելի բարձր արդիւնք արձանագարած են վերոյիշեալ 3 նիւթերուն մէջ, թէեւ ուսումնասիրութիւններ ցոյց տուած են, թէ ամբիւնացի 10 պատանիէն մէկը չի կրնար իր երկիրը գտնել գրութեան զուգահեռ մը վրայ:

«Ոչ ոք տեղեկ էր Գերմանիոյ մէջ կրթական մակարդակի անկումին, - կ'ըսէ Անտրէաս Շլայխերը, որ գլխաւորած է ուսումնասիրութիւնը: Գերմանիոյ մէջ գոյութիւն չունի կեդրոնացեալ քննութեան ձեւ մը, միջոց չկայ գիտնալու, թէ կրթական համակարգը իրականութեան մէջ ինչ կը փոխանցէ. հետեւաբար ոչ ոք մտահոգ էր»:

Շլայխերը, որ ինքնին գերմանացի է եւ Համալսարանի մէջ սեփական վարժարան մը յաճախած է, կ'ըսէ, թէ ընդհանուր չափանիւններու եւ աշակերտներուն մակարդակին հսկող մարմինը չի չորսուած ուսումնասիրութեան կողմէ բացայայտուած թերութիւններէն են:

«Կրթական համակարգին հսկողները չգոյութիւնը իսպառուկութիւնն է», կ'ըսէ Քոխ:

Պատրանաթափ ըլլալու ցնցումը այս օրերուն ծնողներու հասարակաց նիւթն է: Վիճակագրութիւններու «Արեւսպահ» հիմնարկին համաձայն,

գերմանացիներուն 60 առ հարիւրը մտահոգ է Տնտեսական Գործակցութեան եւ Բարգաւաճումի կազմակերպութեան ուսումնասիրութեան արդիւնքներով եւ անոնց 25 առ հարիւրը կը մերժէ ընդունիլ զանոնք:

Թէեւ Տնտեսական Գործակցութեան եւ Բարգաւաճումի կազմակերպութեան ուսումնասիրութիւնը կեդրոնացած է դպրոցներու վրայ, սակայն համալսարանները եւ քննադատութեան թիրախ դարձած են երկրին տնտեսական զարգացման հետք, երբ մեծ թիւով ընկերութիւններ բողոքի ձայներ բարձրացուցած են, որովհետեւ համալսարանաւարտ պաշտօնեաներ յաճախ չեն յաջողիր լրացնել արդի աշխատավայրին պահանջները:

Նոր ապագայ մտնող համալսարանաւարտներու կարողութեան պակասը կ'ընդգծէ բարձրագոյն ուսման թերի կողմերը, կ'ըսէ Գերմանական Համալսարաններու Ընկերակցութեան նախագահ Քլաուս Լենտըրֆրիտ:

Իրօք, կարող համալսարանաւարտներու պակասը արդէն ակնեւ իրողութիւն է: Գերմանիոյ պետութիւնը աշխուժ կերպով օտար մասնագէտներ գործի կը հրաւիրէ կենաքեմիագիտութեան եւ համակարգիչներու մարզին մէջ աշխատելու համար, նոյնիսկ տոկոսով այս քայլին առթած զգացական հակազդեցութեան, որ ստեղծուած է զաղթականներ ընդունելու դէմ: «Մեր սետէս-Պենգ»-ի եւ «Փորչ»-ի նման ճարտարագիտական կուռքերու ծնունդ տուած երկիր մը այսօր ակամատես կ'ըլլայ ճարտարագիտութեան եւ ուսողութեան մարզերու մէջ համալսարանաւարտներու թիւի նուազումին: Կրթութեան նախարարութեան համաձայն, չըջանաւարտներուն թիւը մէկ հինգերորդ համեմատութեամբ նուազած է:

Գերմանիոյ կրթութեան նախարարութիւնը պիտի հրապարակէ ուսումնասիրութիւն մը՝ բացատրելու համար, թէ ինչու ուսանողներուն 30 առ հարիւրը կէս կը ձգէ համալսարանական ուսումը: Համեմատութիւնը 19 առ հարիւր է Բրիտանիոյ մէջ: Տնտեսական Գործակցութեան եւ Բարգաւաճումի կազմակերպութեան համաձայն, գերմանացիներուն միայն 16 առ հարիւրը համալսարանաւարտ է: Համեմատութիւնը նոյնն է Թուրքիոյ եւ Մեքսիկոյ մէջ, 35 առ հարիւր՝ Բրիտանիոյ մէջ եւ 33 առ հարիւր՝ Միացեալ Նահանգներու:

Գերմանացիք միջին հաշուով 28 տարեկանին կը ստանան համալսարանի իրենց վկայականը, իսկ մանրավէպերը բազմաթիւ են անոնց մասին, որոնք աւելի երկար կ'ուսանին: Անոնք միջին հաշուով ամուսնացն 6 տարի համալսարան կը յաճախեն: Ամբիւնացիք 4 տարի կը յաճախեն, իսկ բրիտանացիք՝ 3-5, ինչպէս ցոյց կու տայ Տնտեսական Գործակցութեան եւ Բարգաւաճումի կազմակերպութեան ուսումնասիրութիւնը:

Ուսանողներ սովորաբար կը զանգատուին անհարգող դասախօսներէ, որոնք հազուադէպօրէն կը հանդիպին խճողուած լսարաններէ դուրս: Գերմանիոյ համալսարանները նիւթական տագ-

նապներ կը դիմագրաւեն եւ նուազ հիմնադրամներէ կ'օգտուին, քան՝ Ֆինլանտայի, Շուեդի, Ճապոնի եւ Միացեալ Նահանգներու համալսարանները՝ ըստ Լենտըրֆրիտի: Գերմանիոյ մէջ ուսանողներու թիւին համեմատ դասախօսներու թիւը «3 կամ 4 անգամ» աւելի նուազ է, քան՝ Միացեալ Նահանգներու եւ Բրիտանիոյ մէջ, կ'ըսէ ան:

Այս բոլորը ընդունելով դիւրին չէ երկիր մը համար, որ կը հպարտանայ իր կրթութեան կեդրոններով, որոնք գերազանց արդիւնքներ արձանագարած են մարդկային եւ դասական գիտութիւններու մէջ: Դար մը առաջ ճափոնցի եւ ամերիկացի կրթական գործիչներ Գերմանիա կ'երթային օրինակելի հաստատութիւններու նմանակները ստեղծելու համար: «Ժամանակին աշխարհի մասնագէտներն էինք մեր համալսարաններով եւ կ'ուզէինք վերատիրանալ այդ դիրքին», կ'ըսէ Պոլմասն:

Համալսարաններու մէջ փոփոխութիւնը արդէն զգալի է: 1998էն ի վեր ուսանողներ սկսած են 4 տարիէն վկայական ստանալ եւ կրճատել համալսարանի իրենց 6 տարիները: 2002ի Յունուարէն ի վեր նոր դասախօսներ նուազ կը վճարուին, սակայն անոնց տրուած է իրենց դասաւանդումի մակարդակին համեմատ յաւելեալ գումարաւոր ստանալու առիթներ: Մասնագէտներ կը հաւատան, թէ աւելի տարեց դասախօսներ, որոնք վարժուած են երկու տարի անգամ մը յաւելում ստանալու եւ ամբողջ կեանքի մը համար ապահովուած կը զգան, առնուազն տասը տարիէն հանգստեան պիտի կոչուին, առիթ տալով, որ կրտսեր սերունդը ստանձնէ համալսարաններու մտաւորական կեանքին դեկը:

Թէեւ համալսարաններու նիւթական աղբիւրները սահմանափակ են, սակայն Գերմանիա Տնտեսական Գործակցութեան եւ Բարգաւաճումի կազմակերպութեան անդամ 6 երկիրներէն միակն է, որ համալսարանական ձր ուսում կ'ընձեռէ: Բազմաթիւ կրթական գործիչներ, ներառեալ Լենտըրֆրիտ, կը հաւատան, թէ ժամանակին չորջ կրթութեան սահմանները: Սակայն որեւէ կրթութեան կ'ընդունուի մերժողական կեցուածք այնքան ամուր է, որ ոչ մէկ քաղաքագէտ կը համարձակի պաշտպանել զայն: Իրօք, պետութիւնը անցեալ աշնան օրէնքի վերածեց համալսարանի առաջին վկայականի համար կրթութեան վճարելու արգելք:

Գերմանական Համալսարաններու Ընկերակցութիւնը իր բարեկարգչական տրամագրութեամբ կը ջատագովէ համալսարաններու յաւելեալ ինքնավարութիւնը, յաւելեալ հաշուետուութիւնը եւ անոնց միջեւ աւելի աշխուժ մրցակցութիւնը:

Մինչ այդ Պերլինի իշխանութիւնները ցաւով կը նշեն, թէ Գերմանիա զուրկ է իրաւաբանութեան, բժշկութեան եւ այլ մարզերու մէջ լաւագոյն համալսարաններէն, որոնք սովորաբար են

Միացեալ Նահանգներու տարածքին: Այնպիսի ժամանակներու, երբ Աշխարհի Առեւտուրի կազմակերպութիւնը ազատ Առեւտուրը կը քաջալերէ կրթական սպասարկութեան մէջ, Գերմանիոյ համալսարանները կ'որսնցուցած են բարձրագոյն կրթութեան իրենց մեծաշնորհը եւ ստիպուած են մրցակցիլ դրամատուներու եւ առեւտուրի այլ մարզերու պէս:

Անոնք, որոնք կ'որոնեն հարցին արմատները, մատնացոյց կ'ընեն տարրական ուսման թերութիւնները: Քննադատներ կ'ըսեն, թէ կրթական աւանդապաշտ եւ անհաղորդ դիւանային համակարգը յաճախ աշակերտ չի դնէր իր ուշադրութեան կեդրոնը: Ֆինլանտա, որ Տնտեսական Գործակցութեան եւ Բարգաւաճումի կազմակերպութեան ուսումնասիրութեան մէջ բարձրագոյն դիրքերը գրաւած է, Գերմանիոյ բարեկարգիչներուն օրինակը դարձած է: Ֆինլանտացիք կը յաջողին իրաքանչիւր փոքրիկ աշակերտի հետ աշխատել դասարանին մէջ: Աշակերտներէն քիչեր դասարան կը կրկնեն, եւ ուսուցչական ապարէզը բարձր կը գնահատուի ֆինլանտական ընկերութեան մէջ:

«Մանուկները ընդհանրապէս հետաքրքիր են, սակայն Գերմանիոյ նախարարութեաններուն եւ մանկապարտէզներուն մէջ երեքը չէ զարգացած անոնց հետաքրքրութիւնները գոհացնելու աւանդութեանը», կը զօգոհի պետական ներկայացուցիչ մը:

Կրթութեան նահանջին պատճառները բարդ են, սակայն անոնցմէ շատերը կը կեդրոնանան մէկ երեւոյթի վրայ: Գերմանիա եւրոպական բազմաթիւ երկիրներէ աւելի երկար ժամանակ է ի վեր կառուած կը մնայ կարծր աւանդութեան մը, որ մանուկներու ապագան կը վճռէ 10 տարեկանին՝ անոնց համար ընտրելով երկրին կրթական երեք ուղղութիւններէն մէկը, որոշելով, թէ որո՞նք պիտի հասնին համալսարան, եւ որո՞նք պիտի դառնան ատամնաբուժի օգնական, փոսպան կամ գեղագիտական մարզի մէջ աշխատող, եւ պիտի ծառայեն նման նուազ կրթութիւն պահանջող մարզերու մէջ:

Մայրաքաղաք Բեռլինի օգտուած մանուկներ, որոնք ընկերային յարաբերութեան որոշ կարողութիւններէ զուրկ են, կը դրուին թերաճներու յատուկ դպրոցներու մէջ: «Բնակչութեան նկատառելի մէկ մասը չ'ապրիր մարդկային իր կարողականութեան ծղոկումը», կ'ըսէ Շլայխերը:

Բազմաթիւ քննադատներ անհամբեր են քանդելու Գերմանիոյ կրթական համակարգը եւ ընդօրինակելու Ֆինլանտայի տարբերակը, որ ճկունութիւն կը պահէ կրթական ամբողջ համակարգին մէջ: Անոնք ճիշդ չեն նկատեր որոշել, թէ 10 տարեկան մանուկ մը ապագային ինչ պիտի աշխատի: Իսկ Գերմանիոյ կրթութեան հա-

Շարք՝ էջ 8

## ԴՊՐՈՑՆԵՐԸ «ՊԻՏԻ ԱՆՔԵՏԱՆԱՆ» 2030ԻՆ

ՂԱՍԱՐԱՆՆԵՐԸ ԿՐԱՆ ԱՆՅԵԱԼԻՆ ՊԱՏԿԱՆԻԼ ԷԱՌՈՐԴ ԴԱՐ ԵՏԷ:

«ՊԻ. ՊԻ. ՍԻ.» ԿԸ ՄԱՆՐԱՄԱՍՆԷ.

Դպրոցներուն մեծամասնութիւնը կրնայ առանց դասի, առանց դասարանի եւ նոյնիսկ առանց աշակերտի մնալ 30 տարինէն, կ'ըսէ Բրիտանիոյ մէջ դպրոցներու ղեկավարուածը «Նէշընլ» Քայլէճ ֆոր Սթուլ Լիտըրչիփ» հաստատութեան կողմէ հրատարակուած տեղեկագիր մը:

Տեղեկագիրին նախատեսութիւններուն համաձայն, մինչեւ 2030 դպրոցները պարզապէս կրնան վերածուիլ «սորվելու միջնորդ» դեր կատարողի, վերահսկելով մանուկներուն կրթութեան, որ պիտի փոխանցուի ընկերութիւններու եւ համայնքային միութիւններու կողմէ:

Եթէ դպրոցներ չ'արմարին գիտութեան վրայ հիմնուած տնտեսութեան պահանջներուն, կրթական համակարգը բաժանուի մը պիտի դիմարդաւէ, կ'աւելցնէ տեղեկագիրը:

«Փասիպլը ֆիուչըրը» (հաւանական ապագաներ) վերնագիրով տեղեկագիրին հեղինակներէն Ռայլ Միլըրի համաձայն, դպրոցներ չ'ափէն աւելի հետաքրքրուած են քննութիւններու չափանիւններ յարգելով, ինչ որ կրնայ առաջնորդը աւելորդ մրցակցութեան՝ կոտորակում ստեղծելով եւ խափանելով ուսման մէջ հաւասարութիւն ստեղծելու ճիւղերը:

Կարգ մը շրջաններու մէջ միայն սեփական մարզը պիտի շարունակէ ուսումը ջարձը:

Միլըր կ'ըսէ. «Մարտահրաւէրը հետեւեալն է. դպրոցներ ինչպէս պիտի կարենան մեզ առաջնորդել հոն, ուր ընկերութիւնը պիտի ուզէ երթալ, եւ ոչ թէ ապագայ ապակերպանել իբրեւ ժամանակակից ուղղութիւններու շարունակութիւն մը»:

Տեղեկագիրը ընկերութեան եւ տնտեսութեան մէջ կը նախատեսէ «փոխանցման շրջանի փոփոխութիւն» մը, այնքան մեծ, որքան այն, ինչ որ

տեղի ունեցած է ճարտարարուեստական յեղափոխութեան ժամանակ:

Միլըր կ'ըսէ. «Եթէ չ'կարողանանք մտածել դպրոցներու դերին մասին, ինչ որ իրապէս կարեւոր է, եւ չ'հրաժարինք այն դպրոցներէն, որոնք անցեալի աւանդն են, դժուար պիտի ըլլայ մշակել ապագայի յարմար կրթական համակարգ մը»:

Տեղեկագիրը երեք լաւատես տարբերակներ կը պատկերացնէ 2030ի համար: Առաջին, դպրոցներ կրնան կրթական ծրագիրներ մշակել աշակերտներուն պահանջներուն յարմարելով եւ զանոնք ընդհանրացնելով, երկրորդ՝ կրնան պարզապէս կրթական սպասարկութիւն մատուցել, ինչպէս՝ դասաւանդում, եւ դադարի քննութիւն պահանջելէ, կամ կրնան ընել հակառակը, այսինքն՝ դադարի ուսուցանելէ եւ գոյութիւն ունենալ միայն աշակերտներուն գիտելիքները չափելու համար: Դասաւանդումը կրնան ստանձնել այլ կազմակերպութիւններ:

«Նէշընլ Քայլէճ ֆոր Սթուլ Լիտըրչիփ»-ի ներկայացուցիչներէն մէկը կ'ըսէ. «Կրթական մշակութեան դպրոցները կ'արգելն մէջ կը պիտի ըլլայ ճշդը: Դպրոցներ ապագայի դերը կամ դիրքը: Անոնց որոշումը յայտնապէս կարեւոր է դպրոցական պատասխանատուներու համար, որովհետեւ պիտի ճշդէ անոնց նպատակներն ու մեթոտները: Տեղեկագիրին մէջ ներկայացուած տարբերակները պարզապէս անկապ ընտրանքներ չեն, այլ՝ ապագայի դպրոցներու հաւանական պատկերացումներ, որոնք դպրոցական պատասխանատուներու ցոյց կու տան, թէ ապագայի քարտէսները կարելի է ուրուազանել այսօր, թէ՛ քարտէսները կարելի է ճշդելու: Եթէ կ'երեւակայինք փոփոխութեան առկայութիւնը, ապա կրնանք գիտնալ, թէ ինչ պէտք է ընենք հիմա»:

## ՔՆՆՈՒԹԵԱՆ ՄՇԱԿՈՑԹԸ ԿԸ ԽԵՂԴԷ ՍՈՐՎԵԼՈՒ ՀԱՄՈՅԸ ԲՐԻՏԱՆԻՈՅ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒ ԵՒ ՂԱՍԱՆՍՍԵՐՈՒ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԲՆԱԴԱՅԵ ՄԱՆՈՒԿՆԵՐԸ ՆԻՇՈՎ ԴԱՏԵԼՈՒ ԱՄԱՆՂՈՒԹԻՒՆԸ: «ՏԸ ԿԱՐՏԻՆ» ԿԱՆԴՐԱԴԱՌՆԱՅ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԵՅՈՒՄՔԻՆ

Մանուկներուն կը պարտադրուի քննութիւն անցնելու մշակոյթ մը, որ անոնց մէջ կը մեղցընէ սորվելու հանցքը եւ դպրոցները կը վերածնէ «գործարաններու», կ'ըսէ Բրիտանիոյ Ուսուցիչներու եւ Դասախօսներու Ընկերակցութեան յայտարարութիւնը:

Պէճֆոլի մէջ կայացած տարեկան համագումարի մը առիթով ընկերակցութեան անդամներ Բրիտանիոյ պետական կրթական համակարգը՝ դատապարտելով 7, 11 եւ 14 տարեկան աշակերտներու պարտադրուած պետական քննութիւնները, կրթական պետական ծրագիրին կողմէ սահմանուած քննութիւններուն թիւը, ինչպէս նաեւ՝ 3էն 5 տարեկան աշակերտներու վրայ դրուած կրթական ճնշումները, որոնք ձախողութեան զգացումով կրնան ընկճել մանուկները:

Ընկերակցութեան նախագահ Մայքըլ Մուր կ'ըսէ, թէ՛ «կրթական չափուած - ձեւուած համակարգը կը կիրարկուի մարդամեքենայի վերածուած ուսուցիչներու կողմէ»:

Ընկերակցութեան այս տարուան համագումարին նշանաբանը կ'ըսէր՝ «Ուսուցանել սիրով»:

«Բազմաթիւ մանուկներ կը խրտչին դաս սորվելէ, որովհետեւ կը զգուցին ձանձրոյթ պատճառով կրթական ծրագրերէն, որոնք սահմանափակ ընտրանքներ կ'ընձեռեն եւ նուազ կ'առնչուին մանուկներուն կեանքին: Զարմանալի չէ, որ անոնք կը սկսին անկարգապահ դառնալ, կ'ըսէ Մուր: - Ինչպիսի՞ կրթական համակարգ ձեռնարկէ, երբ մանուկները կը խախտեն իբրեւ ձեռնարկներ, երբ անոնք տակաւին 11 տարեկան են, նոյնիսկ՝ 7 տարեկան: Ինչպիսի՞ բարոյականութիւն է մանուկներուն պարտադրել կրթական աղբատ ծրագիր մը, պարզապէս օգնելու համար քաղաքագէտներուն, որպէսզի անոնք

հասնին իրենց նպատակին եւ ուրախ պահեն պետական գանձարաններուն պատասխանատուները: Մանուկի մը կեանքին մէջ ինչ կը փոխուի, եթէ են որոշ մակարդակներ նուաճէ 11 տարեկանին: Արդեօք ան աւելի լա՞ւ անձ մը կը դառնայ, արդեօք իբրեւ մարդ կը հարստանայ եւ սորվելու կիրքը կը զարգանայ՝ անոր մէջ: Անշուշտ ո՞չ»:

Համագումարին առիթով կարգ մը ուսուցիչներ գոված են հիմնական գիտելիքներ փոխանցող կրթական պետական ծրագիրը, սակայն ըսած են, թէ ուսուցիչներ դրուած են 7 տարեկան աշակերտները քննութիւններու պատ

# ՆՈՅՆԻՍԿ ԳԵՐՄԱՆԱՅԻ...

Շարունակուած՝ 7րդ էջէն

մակարգին հաւասարութեան սկզբունքին ջատագովե-րը ցաւով կ'անդրադառնան, թէ ուսումնասիրութեան համաձայն, նոյն համակարգը կը շեշտէ դասակարգա-յին բաժանումները, եւ ոչ թէ նուազագոյնի կ'իջեցնէ զանոնք:

Կրթական գործիչներ կ'ուզեն օգտագործել Տնտեսա-կան Գործակցութեան եւ Բարգաւաճումի կազմակեր-պութեան կողմէ կատարուած ուսումնասիրութեան աւթած ցնցումը՝ կասեցնելու համար կրթական ամբողջ համակարգին «յեղաշրջումին» դէմ որեւէ միջոցառում: Սակայն փոփոխութիւնը դիւրին չէ պետութեան կողմէ ղեկավարուած դիւանակալութեան մէջ:

Բարեկարգիչներ կը ձգտին վերացնել կէս օրուան դպրոցական դրութիւնը, որուն համաձայն, աշակերտ-ներ տուն կ'ուղարկուին կէսօրին եւ ծնողներէն մէկը կամ մանուկներ խնամող մը կը ստիպուի տունը մնալ: Սակայն պատասխանատուներու համաձայն, առուազն 5 տարի ետք կարելի պիտի ըլլայ երկարաձգել երկրին դպրոցներուն 25 առ հարիւրի ժամերը:

Կրթական նոր ծրագիրներու մշակումը գրեթէ ան-կարելի է Գերմանիոյ վերամիացումին յաջորդող շրջա-նին, երբ դիւրին չէ բարձրացնել տուրքերը, եւ պիտու-նէական բացերը արգէն անցած են եւրոպական միաց-եալ դրամանիշին կողմէ դրուած սահմանները: Այսու-հանդերձ Պերլինի իշխանութիւնները կ'ուզեն յաւելնել գումարներ յատկացնել տարրական կրթութեան, ամ-բողջ օրուան վրայ երկարող դպրոցներու, ինչպէս նա-եւ՝ Թուրքիայէն ու Ռուսիայէն գաղթած ընտանիքնե-րու զաւակներուն կրթութեան:

Գերմանիոյ կրթական համակարգը երկար ժամանակ կառուած մնացած է իր ակնածանք պարտադրող հուշ-կին, որովհետեւ արտադրած է բազմաթիւ վարպետ ար-հեստաւորներ, ինչպէս՝ կղմիտը շարողներ եւ մեքենա-գէտներ: Քննադատներ կ'ըսեն, թէ արհեստի մարզերու մէջ կրթութիւնը, որ հիմնուած է միջնադարու աշխա-տաւորական համագործակցութիւններու գործելաձե-ւին վրայ, եղափոխուած է 19րդ եւ 20րդ դարերու պա-հանջները գոհացնելու համար եւ չի ծառայեր ներկայ համաշխարհային տնտեսութեան:

(ՅԱ.ՊԱՒՈՒԱՇ)

## ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ

«Ազդակ»ի մէջ ազգային կամ առեւտրական ծանու-ցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումին բնագիրը ընթերցի գիրով (հաստատու-թեանց պարագային՝ նախընտրաբար պաշտօնական թուղթի վրայ, եւ՝ հաստատուած) ներկայացնել «Ազ-դակ»ի ծանուցումներու գրասենեակը:

## ԽԱՉԲԱՌԻ ԹԻՒ 5450 Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ

	1	2	3	4	5	6	7	8	9	10
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										

ՇՈՐԻՉՈՆԱԿԱՆ	ՈՒՂՂԱՆՅԵԱՅ
1. Սկաւառակ - Նոյն գիրերը:	1. Ալպիւմին - Սոդոմի բախտակից քաղաքնե-րէն:
2. Զրային թռչուն - Թոնիրին կրակը խառնե-լու փայտ:	2. Յովհաննէս Այվա-գովսքիի հայրը:
3. Հագարէ ծնած Արրա-համի որդին - Այրուբենէն:	3. Պատ - Պարուրէ՛:
4. Կրկնուած բաղա-ձայններ - Զայնակից տա-ռեր - Թոք:	4. Ընտանիքի անասուն-ներ բռնաճնելու հողային կայունած:
5. Եղանակաւորի մակ-բայ - Տնկելի ճիւղ:	5. Մեծ Հայքի նահանգ-ներէն - Կոնկի:
6. Մաքուր, անրիծ:	6. Թէ որ - Կրկին - Ար-դի:
7. Տրէ - ձար:	7. ՄԱԿի նախկին ընդ-հանուր քարտուղարը - Այ-ցելու:
8. Մէկ աչք ունեցող - Զայնանիշ:	8. Ընդարձակ :
9. Պատշաճ - Արական անուն:	9. Ելունդ - Բոլոր:
10. Թերթի երես - Կրկնուած բաղաձայններ:	10. Հաշուեցանկ - Հա-յաստանի հնաժամերէն:

**Թի 5449**

**ԽԱՉԲԱՌԻՆ**

**ԼՈՒԾՈՒՄԸ**

1	Մ	Ն	Գ	Ա	Ղ	Մ	Օ	Տ	
2	Տ	Ն	Գ	Ա	Ղ	Շ	Ա	Ր	Ա
3	Ա	Ն	Ա	Ն	Ն	Ա	Յ	Ի	Լ
4	Ձ	Ա	Ն	Գ	Ա	Կ	Ր	Կ	Կ
5	Բ	Ն	Ա	Ռ	Ա	Ս	Ա	Ն	Կ
6	Ա	Կ	Ա	Տ	Ի	Ր	Ն	Ե	Ձ
7	Ղ	Ե	Կ	Ք	Ե	Կ	Ո	Ի	Ձ
8	Ռ	Ի	Ն	Ա	Ն	Ո	Յ	Ա	Ն
9	Հ	Ա	Շ	Ի	Շ	Յ	Տ	Օ	Ր
10	Ա	Ս	Ս	Ա	Կ	Ա	Ր	Ա	Ն

# ՃԱՏՐԱԿ

1. ՍԵՒԵՐԸ ԿԸ ՌԱԴԱՆ ԵՒ ՄԱԹ 2 ՇԱՐԺՈՒՄՈՎ

ԼԻՓՈՆ

2. ՃԵՐՄԱԿՆԵՐԸ ԿԸ ՌԱԴԱՆ ԵՒ ՄԱԹ 2 ՇԱՐԺՈՒՄՈՎ

ՈՒՐԸՆԸՐ Տ. - ԼԱՆՏ Ի. (2002)

3. ՃԵՐՄԱԿՆԵՐԸ ԿԸ ՌԱԴԱՆ ԵՒ ՄԱԹ 2 ՇԱՐԺՈՒՄՈՎ

ԵՐՈՒՆԻՆ ԵՐԱՌՆՅԻՏ

4. ՃԵՐՄԱԿՆԵՐԸ ԿԸ ՌԱԴԱՆ ԵՒ ՄԱԹ 2 ՇԱՐԺՈՒՄՈՎ

ՎԱՍԻՒ ՄԱՐԶՈՎՍԵԻ

Խնդիրներուն լուծումը տեսնել՝ 10րդ էջ

## ☆ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ☆

- ☆ **ԽՈՅ** (21 Մարտէն 20 Ապրիլ) Աստուծոյ կողմէ օրհնուած ամիս մըն է այս, որուն ընթացքին պիտի կարենաք ձեր բոլոր ծրագիրները իրագործել ուսնց մտահոգութեան: Այսօր սակայն տնային մանր-մունր հարցեր արգելք պիտի ըլլան կա-տարելու աւելի կարելու գործեր:
- ☆ **ՅՈՒԼ** (21 Ապրիլէն 21 Մայիս) Այս ցոր ամսուան ընթացքին պիտի կարենաք կրկնակի շահեր ապահովել եւ գոհացում տալ ձեր փա-փաքներուն: Այսօր պիտի կատարէք ձեր ասպարէզին վերաբերելի տեղափոխութիւն մը, որմէ շատ գոհ պի-տի մնաք: Հոն պիտի ծանօթանաք անձերու, որոնք օգ-տակար պիտի ըլլան ձեր յառաջիկայ գործունէութեան:
- ☆ **ԵՐԿՈՒՇԱԲԹ** (22 Մայիսէն 21 Յունիս) Ձեր վրայ ճշտող մտորակը ի վերջոյ պիտի դադրի ձեզ խնայարէլէ: Այսօր պիտի կարենաք խոհեմու-թեամբ օգտագործել ձեր դրամը: Միշտ նոյն ձեռով տնտեսեցէք ձեր ունեցածը:
- ☆ **ԽԵՅԳԵՏԻՆ** (22 Յունիսէն 23 Յուլիս) Նոր ամիսը ձեզի պիտի պարգեւէ հագուողէ պօրեւ պատահող օգնութիւն եւ ձեր կեանքը պիտի ըլլայ ներ-դաշնակ: Ձեր ազնիւ կեցուածքը ձեր մօտ պիտի բերէ այսօր այն անձը, գոր լաւ չէիք ճանչցած եւ նոյնիսկ խրտչած էիք իրմէ:
- ☆ **ԱՌԻԻՄ** (24 Յուլիսէն 23 Օգոստոս) Այսօր պիտի կարենաք դիմագրաւել օրուան բոլոր հարցերը շատ դիւրութեամբ, առանց արտորանքի: Օրը պիտի ունենայ հանելի անակնկալներ:
- ☆ **ԿՈՅՍ** (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր) Ձեր բարեկամները անտեսելու տրամադրութիւն ու-նիք, բայց բարեբախտաբար անոնք չեն մոռնար ձեզ եւ այսօր պիտի այցելեն կամ պիտի հետաձայնեն ձեզի:
- ☆ **ԿՇԻՌԻ** (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր) Այսօր պիտի արժանանաք պաշտօնի բարձրացման կամ այլ կարգի գնահատանքի: Բայց այս բարիքը ձեր ստիպողութեամբ չեղաւ, այլ ձեր արժանիքով է, որ հասար անոր: Ապրիլ ք:
- ☆ **ԿԱՐԻՃ** (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր) «Լաւ է ուշ, քան երբեք», կ'ըսէ իմաստութիւնը: Այ-սօր պիտի կարենաք յաջողութիւն արձանագրել ու-սումնական ձեր հարցերուն վերաբերել: Արժանի էիք անոր, որովհետեւ լաւ աշխատանք կատարեցիք այս կրրական տարեշրջանին:
- ☆ **ԱՂԵՂՆԱՌՈՐ** (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր) Մի՛ փախչիք, երբ լսէք ամուսնութիւն բարը: Այդ մարգին մէջ ստիպողական բան չկայ, եւ ոչ որ կրնայ ստիպել ձեզի, որ ձեր կամքին հակառակ շարժիք:
- ☆ **ԱՅԾԵՂՋԻԻՐ** (22 Դեկտեմբերէն 20 Յունուար) Վեհի մը ընթացքին դիւրութեամբ պիտի յարթան-կէք ձեր փաստացի մէջբերումներով: Ջղջունութեան ոչ մէկ նշան պիտի արտայայտէ: Պիտի գնահատուիք:
- ☆ **ԾՈՎԱՆՈՅԸ** (21 Յունուարէն 19 Փետրուար) Աշխատանքի մէջ ձեզի պիտի վստահին նոր պարտա-կանութիւններ, անսովոր գործեր, տարբեր պարտա-կանութիւններ: Լաւ ձեռով պիտի իրագործէք այդ ամէնը:
- ☆ **ՁՈՒԿ** (20 Փետրուարէն 20 Մարտ) Դուք ձեզի պարտադրեցէք կատարել մարգանք, եթէ նոյնիսկ յոգնած զգաք: Այսպիսով դուք ձեզ աւելի առողջ պիտի զգաք: Ուշադիր եղէք ձեր առողջութեան:

# ՕՐԱՏԵՏՐ

ՓՈՒՍՏՈՆ / ՅՈՒՅԱՀԱՆԴԷՍ / ԵՐԿԱՀԱՆԴԷՍ

## ԻՏԱԼԻՈՅ ԱԶԳԱՅԻՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ ԻՏԱԼԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԵՐԳՆԵՐՈՒ ՇԱՐՔ ՄԸ

24 Մայի-սին մինչեւ 6 Յունիսը երկարող օրերուն Լի-բաւանի մէջ Իտա-լա կաւն Առեւտրի պատուի-րա կ ու թեան կող-մէ կազմա-կերպուած է Լիբա-ւանի մէջ Իտալիոյ դեսպանատան հո-վանաւորութիւնը վա-յելող մշակութային նախաձեռնութիւննե-րու շարքով մը կը տօնուի Իտալիոյ Ազ-գային տօնը:



թա» եւ «Մա-տամ Պա-թըր Ֆլալ» օփերաներէն ա թ ի ա ն ե թ, ինչպէս նաեւ դասական եր-գեր:

Այդ ծիրէն ներս, 2-6 Յունիսը երկարող է չորս ելոյթներով հանրութեան պիտի մատուցուի իտալա-կան դասական երաժշտութեան հա-մերգներու շարք մը, որուն առաջինը տե-ղի կ'ունենայ այսօր երեկոյեան ժամը 8:45ին. ԵՌԻՆԵՍՔՕԻ վերտիի «Լա Թրապիա-ւա» եւ «Մա-տամ Պա-թըր Ֆլալ» օփերաներէն ա թ ի ա ն ե թ, ինչպէս նաեւ դասական եր-գեր:

Իտալական դասա-կան երաժշտութեան այս ելոյթներով հանդէս պի-տի գան իտալացի սփ-րանս Սինչիա Ռիպոնէ եւ թեւոր Ռոպերթո Քու-րալի «Թէպօր Քոմի-նալ տը Մոտենա» սենե-կային նուագախումբը: Ելոյթին յայտագիրը բաղկացած է Ռոսինիի, Մոցարթի, Փուչինիի եւ վերտիի ստեղծագոր-ծութիւններէն: Պիտի մեկնաբանուին Մոցար-թի «Լէ նոչէ տը Յիկա-րո», Փուչինիի «Լա Պո-հէմ» եւ «Թոսքա», 8:45ին. ԵՌԻՆԵՍՔՕԻ վերտիի «Լա Թրապիա-ւա» եւ «Մա-տամ Պա-թըր Ֆլալ» օփերաներէն ա թ ի ա ն ե թ, ինչպէս նաեւ դասական եր-գեր:

Յատկանը-շական է, որ յառաջիկայ քանի մը օրե-րուն ընթաց-քին այս դասական համերգը պիտի շրջի Լիբաւանի տարած-քին: Վաղը երեկոյ-եան ժամը 6:00ին, նման ելոյթ մը տեղի պիտի ունենայ Թրի-փոլիի «Քուալիթի ին» պանդոկին մէջ: Հինգշաբթի, 5 Յունի-սի երեկոյեան ժամը 8:45ին, Մուրի «Ռեսթ Հաուս»ին մէջ, իսկ Ուրբաթ, 6 Յունիս երեկոյեան ժամը 8:30ին՝ Մայսայի «Խան էլ Ֆրանս»ին մէջ:

**ԱՅՍՕՐ**

- Երաժշտական երեկոյ՝ «Հարմոնի տի սուար», ճիւր՝ «Ռոմանո Է գարգուէլա», ժամը 18:30ին, Ֆրանսական Մշակութային կեդրոնին մէջ:

- «Յեսթիվալ Իրալիանո», երգահանդէս, ելոյթ կ'ունենան Սինչիա Ռիպոնէ (սփրանս) եւ Ռոպերթո Քուրալի (թեւոր), ժամը 20:45ին, «ԵՌԻՆԵՍՔՕԻ» մէջ:

- Գորգերու ցուցահանդէս՝ «Թափ տի Քոքա», «Սըրսոթ» բանգարանի մէջ, մինչեւ 12 Յուլիս:

- Ձեռնդման արուեստի ցուցահանդէս՝ «Էքրանձ մեյանձ», Միշէլ Թաուրիլի յարգարմի արուեստի գործերը, «Էսփաս էս. Տէ.» ցուցասրահ, մինչեւ 7 Յունիս:

- Նկարչական ցուցահանդէս՝ Ռոգ Հիւսէյնիի գործերը, «Ժանին Ռուպէլ» ցուցասրահ, մինչեւ 11 Յունիս:

## ԱԶԳԱԿ 50 ՏԱՐԻ ԿՈՒՄՈՒՄ


ՄԱՅԻՍ 28Ի ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ ՆԻՒ ԵՌՔԻ ՄԷՉ ՆԵՐԿԱՅ ԿՐԼԼԱՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԾԵՐԱԿՈՒՏԱԿԱՆՆԵՐ ԵՒ ԵՐԵՍՓՈՒՍԱՆՆԵՐ «ՊէՏԻ Ե ՅԱՐԳՈՒԻ ՆԱԽԱԿԱՀ ՈՒՒԼՍԸՆԻ ՏՈՒԱՇ ԽՈՍՏՈՒՄԸ», ԿՐԸՍԵ ԵՐԵՍՓՈՒՍԱՆ ՍԵՆԼԵՐ

Հայաստանի Հանրապետութեան անկախութեան 35րդ տարեդարձը այս տարի տօնուեցաւ մեծ շուքով, Նիւ Եորքի «Թաւոն Հոյ»ի մէջ: Սրա-հը լեցուած էր իրաւ հայերու կողմէ: Օրուան հանդէսին նախագահեց Եղուարը Սահակեան: Հանդէսը բա-ցանցով տեղի ունեցաւ մը՝ բացատրե-լով օրուան իմաստը: Նիւ Եորքի երեսփոխան Էմանուէլ Սելլեր օր-ուան գլխաւոր մտերիկացի խօսողն էր եւ ըսաւ, թէ Հայաստան անկա-կ ըլլալու է եւ նախագահ Ուիլյամ խոստումը հաշիւ՝ յարգուելու է: Երեսփոխանը խոստացաւ Հայաստա-նի անկախութեան համար իր աշխա-տանքը տանիլ Քոնկրէսի մէջ: Խօսեցաւ նաեւ հանրապետական ծերակուտական ծակոպ Էյվալի կող-մէ ներկայացուցիչ մը: Հանդէսին զրկուած էր բազմաթիւ ողջոյններ ամերիկացի երեսփոխաններու եւ ծե-րակուտականներու կողմէ: Խօսեցան նաեւ Վրաստանի, Ազըր-պէյճանի, Հիւսիսային Կովկասի, Ուրբաթիոյ եւ Պիեռոստիոյ ներկա-յացուցիչները: Բ. Նաւասարդեան ներկայացուց գանձը եւ թարգմա-նեց այնուհետեւ ճառերը: Օրուան գլխաւոր բանախօսն էր Ռուբէն Դարբինեան, որ ըսաւ, թէ

- ԱՅՍՕՐ՝ 2 ՅՈՒՆԻՍԻՆ**
- 1904 մահ Աշոտ Երկաթի (Արմենակ Լեւոնեան):
  - 1941 մահ գրագետ Վազգէն Շուշանեանի:
  - 1978 «Շ. Յ. Ա. Մարտիկներ» կ'ահաբեկեն Մատրիտի թուրք դեսպանին կինը. քեռայրը (Ճախկին դեսպան) եւ վարորդը:



### ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷՋ ՎԵՐՋ «ՔՈՆՔՈՐՏ»Ի «ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ»...



Ֆրանսա Շաբաթ օր հրաժեշտ տուա «Քոնքորտ»ին. գերմանացի օդանավ էջը կատարեց Շարլ Եր 401 օդակայանը, «Էր Ֆրանս»ի համար իր վերջին թռիչքին ասարտին:

Շուրջ 15 հազար հոգի օդակայան ժամանած է՝ ակնատես ըլլալու համար օդանավաշինության պատմության 27 տարուան իրադատուկ ժամանակաշրջանի մը ասարտին, մինչ Նի Եոթըքն ժամանած «Քոնքորտ»ը էջը կը կատարէր:

Օդանավը պիտի դադարի ծառայելէ՝ մեծ ծախսերուն եւ ճամբորդներու թիւին նուազումին պատճառով:

«Պրիթ շրուէյկ», որ օդանավային միակ այլ ընկերութիւնն է, որ կը գործածէ «Քոնքորտ»ը, Հոկտեմբերին իր կարգին իր սպասարկութիւնները պիտի դադարեցնէ:

«Քոնքորտ»ի զաղափարը յղացուած է 1960ական թուականներուն եւ նկատուած՝ ֆրանսէրրիտանական արհեստագիտական գործակցութեան իրագործումներէն մէկը: Անիկա իր առաջին ճամբորդները փոխադրելու սկսած է 1976ին՝ ձայնի արագութեան կրկնապատիկը արագութեամբ, յեղաշրջելով անդրատլանտեան առեւտրական ճամբորդութիւնը եւ կարելի դարձնելով Եւրոպայի եւ Մ. Նահանգներու մէջ միեւնոյն օրուան ընթացքին ժողովներու գումարումը:

(ԱՅՓ)

### ԱՄԵՐԻԿԱՅԻ ԵՒ ԲՐԻՏԱՆԱՅԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐ ԿԸ ՓՈՐՁԵՆ ՀԵՐՔԵԼ...

Շարունակուած Ա. ԷջԵԳ



Ճորճ Թեմէթ

#### ԻՐԱՔԻՆԵՐԸ ԶԻՆԱՌԱՎ Կ Ը ԼԼԱՆ

Իրաքը գրաւող դաշնակից ուժերը Շաբաթ օր սկսան հաւաքելու իրաքցիներուն անհատական զէնքերը՝ անիշխանութեան եւ ոճիրներուն վերջ տալու ճիգով մը: Դաշնակից ուժերու հրամանատարութիւնը Իրաքի տարածքին կեդրոններ հաստատեց, որ իրաքցիները պէտք է յանձնեն իրենց զէնքերը. կեդրոնները ընդհանրապէս ուտիկանատուներուն մօտ են: Յիշեալ միջոցառումէն գոհ չեն իրաքցիները, որոնք չենք ուզեր բաժնուիլ իրենց անհատական թեթեւ զէնքերէն: Մինչեւ երէկ յետմիջօրէ, ոեւէ իրաքցի չէր այցելուած կեդրոնները՝ յանձնելու համար զէնքերը:

Միւս կողմէ, աւելի քան հինգ հազար իրաքցիներ երէկ ցոյց մը կազմակերպեցին Պասայի մէջ, իբրեւ բողոք բրիտանացի կառավարչին դէմ: Յուշարարները դժգոհ էին, որ օտար կառավարիչ մը կը նշանակուի քաղաքին վրայ: Անոնք պահանջեցին, որ շրջանի իշխանութիւնը յանձնուի իրաքցիներուն:

ԹԻՐԱՆԻ գերագոյն ղեկավար այսօրոյս Ալի Խամենէի կոչ ուղղեց իսլամական երկիրներուն՝ դէմ դնելու Իրաքի մէջ ամերիկեան իշխանութեան:

(ԱՅՓ)

#### ՃԱՏՐԱՎԻ ԽՆԳԻՐՆԵՐՈՒՆ ԼՈՒՇՈՒՄՆԵՐԸ

1. 1.exd7 Փb8 2.d8Մ# [ 2.d8Մ#]
2. 1.Մxg6+ Փg8 [ 1...Փh8 2.Մxg7#] 2.Մxg7# 1-0
3. 1.Ձb4 Ձa2 [ 1...Քxd3 2.Ձxd3#; 1...Ձb3 2.Մf3#; 1...Ձxb4 2.Ձxe5#; 1...Ձdc3 2.Մe3#; 1...Ձec3 2.Մg3#; 1...Ձef6 2.Մxf5#; 1...fxg4 2.Մxe4#] 2.Ձxd5#
4. 1.Ձa4 Փxc4 [ 1...d4 2.Մb5#; 1...dxc4 2.Ձa5#; 1...dxc6 2.Քxc6#] 2.Մc3#

### ՊԱՂԵՍՏԻՆԵՒԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՏԱԳՆԱՊ

## ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԺՈՂՈՎԻ ԼՈՒՐՋ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Խաղաղութեան վեհաժողովէ մը երէք օր առաջ, Իսրայէլ երէկ մեղմացուց պաղեստինեան շրջաններուն շրջափակումը՝ յուսալով, որ Աքապայի հանդիպումին կարելի պիտի ըլլայ ապահովել պինդապինդ մը համաձայնութիւնը:

Իսրայէլեան բանակը յայտարարեց, որ Կապայի եւ Այսրյորդանի ամբողջական շրջան փակումը չընջուած է Շաբաթ կէս գիշերին: Իսրայէլ յայտարարեց նաեւ աստիճանական հեռացում մը Կապայի եւ Այսրյորդանի կարգ մը շրջաններէն, որ սպասուածութիւնը պիտի յանձնէ պաղեստինեան ուժերուն: Պ ա ղ է ս ո ի ն է ա ն շրջանները շրջափակ-

ուած են մէկուկէս տարիէ ի վեր՝ տնտեսական դժուարութիւններ պատճառով պաղեստինցիներու, որոնցմէ շատեր կ'աշխատին Իսրայէլի մէջ: Երէկ արդէն աւելի քան 4500 պաղեստինցի գործաւորներ Կապային Իսրայէլ անցան:

Մինչ այդ, ամբողջ Միջին Արեւելքը կը սպասէ այս շաբթուան երկու վեհաժողովներուն, որոնց առաջինը պիտի կայանայ վաղը Շարմէլ Եշիւի մէջ: Անոր պիտի մասնակցին Միացեալ Նահանգներու նախագահ Ջորճ Պուշ, Եգիպտոսի Մուսարաք եւ արաբ քանի մը այլ ղեկավարներ: Հիմնական հարցը պիտի ըլլայ պաղեստինցիներու Իսրայէլէ ելնելու շրջանները շրջափակ-

խաղաղութեան գործընթացի վերականգնումը եւ խաղաղութեան ճամբու քարտէսի կիրարկումը:

Երկրորդ վեհաժողովը տեղի պիտի ունենայ Չորեքշաբթի օր, Յորդանանի Աքապա քաղաքին մէջ: Վեհաժողովը կը հիւրընկալէ Ապտալա Բ. թագաւորը, իսկ անոր կը մասնակցին Պուշ եւ պաղեստինցի իսրայէլացի վարչապետները՝ Մահմուտ Ապպաս եւ Արիէլ Շարոն:

Իսրայէլ եւ պաղեստինցիներ կը յուսան պինդապինդ մը յայտարարել Աքապայի վեհաժողովին, սակայն ամէն ինչ կախեալ է պաղեստինեան արմատական շարժումներէն, որոնց հետ տակաւին չէ յաջողած համա-

ձայնութիւն մը գոյացրելու Ապպաս: Ապպասի կառավարութիւնը յայտնեց, թէ Համասի, Իսլամական Ժիհադի եւ այլ շարժումներու հետ բանակցութիւնները կը շարունակուին եւ թէ յառաջիկայ երկու օրերուն ընթացքին պատասխանը պիտի յստականայ: Մշակոյթի նախարար Զիատ Ապու Ամէր ըսաւ, որ թէեւ լաւատես է եւ համաձայնութիւն մը կ'ակնկալէ, սակայն ոչ Աքապայի հանդիպումին: Ապու Ամէր դիտել տուաւ, որ բանակցութիւնները կարելի չէ երակացնել յառաջիկայ մէկ կամ երկու օրերուն ընթացքին, հետեւաբար պէտք չէ պինդապինդ յայտարարութիւն մը նախատեսել Աքապայի վեհաժողովի արտոյն: Ապու Ամէր շեշտեց նաեւ, որ պինդապինդ միջպաղեստինեան ներքին հարց մըն է:

Միւս կողմէ, պաղեստինեան իշխանութեան նախագահ Եասեր Արաֆաթ, որ դիտումնաւոր կերպով կ'անտեսուի ու կը շրջանցուի ամերիկացիներուն եւ Իսրայէլի կողմէ, կոչ ուղղեց Պուշի հետապնդելու պաղեստինեան անկախ պետութիւն մը օրաօրի գործադրութիւնը:

ՇԱՐՈՆ Իսրայէլացի նախարարներէն պահանջեց պաղեստինցի իրենց պաշտօնակիցները «նախարարներ» կոչելու, հակառակ անոր որ պաղեստինեան պետութիւն գոյութիւն չունի: Շարոն աւելցուց, որ պէտք է նախարար կոչելին, որովհետեւ պաղեստինեան կառավարութեան ճանաչում տուած են 104 երկիրներ:

ԹՍԼԱՄԱԿԱՆ Ժիհադ յայտարարեց, որ թշնամական որբեւծագիրներ չունի Կապա գտնուող ամերիկացիներուն հանդէպ: Յայտարարութիւնը կը հակադարձէր ամերիկեան զուլազում մէկ կոչին, որ իր քաղաքացիներուն կ'ըսէր, որ Կապայի մէջ առեւանգումի կրնան ենթարկուիլ:

(ԱՅՓ)

### ՎԼԱՏԻՄԻՐ ՓՈՒԹԻՆ ԵՒ ՃՈՐՃ ՊՈՒՇ...

Շարունակուած Ա. ԷջԵԳ

մասնակցելու Իրանի Պուշէհրի կորիզային ուժանիւթի գործարանին կառուցման:

Ուաշինկթըն մերժած է առաջարկը: Արտաքին գործոց նախարարութեան մէկ պաշտօնատար յայտնած է, թէ «որեւէ երկիր» պէտք չէ այդ գծով օժանդակել Իրանի:

Ամերիկացի բարձրաստիճան դիւանագէտ մը երէկ փոխարին Պուշ տեսակցութենէն ետք ըսած է, թէ Պուշէհրը Ուաշինկթըն - Մոսկուա յարաբերութեանց գլխաւոր խոչընդոտը կը մնայ:

#### ԻՎԱՆՈՎԻ ԿՈՉԸ ԻՐԱՆԻ


Միւս կողմէ, Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Իվան Իվանով երէկ կոչ ուղղած է Իրանի, որ ՄԱԿի աւելի խիստ քննութիւններուն հաւանութիւն տայ՝ վերջ տալու Համար Թեհրանի գէնքերու «զաղտնի» ծրագրին գծով մտահոգութեանց:

Իվանով կոչ ուղղած է Իրանի, որ կորիզային Ուժանիւթի Միջազգային Գործակալութեան հետ Համաձայնութիւն մը կնքէ, որպէսզի արտօնութիւն տայ աւելի խիստ քննութիւններու:

Սակայն Իվանով շեշտած է, որ Պուշէհր կորիզային ուժանիւթի գործարանին կառուցումը կապուած չէ Համաձայնութեան կնքումին:


Իրան ցարդ մերժած է նման Համաձայնութեան մը կնքումը:

(ԱՅՓ)



ՆԵՂ «ԽՈՂՈՎԱԿ»Ի ՄԸ ՄԷՋ ՄՏՆԵԼՈՒ ԿԱՐԻՔԸ ԶՄՆԱՅ ԱՅԼԵԻՍ. ԱՐԳԻ ԹԷՔՆՈԼՈԳԻԱ ԳՈՑ MRI ԳՈՒՍԱՐԻՆԵՅՑ ԲԱՅ MRI ԻՆՎ

ՎԱԽՆԱԼՈՒ ՊԱՏՃԱՌ ԶՄՆԱՅ ԲՈԼՈՐ MRI ԵՎ ԱՐԱՀԱՆՄԱՆ ԿԱՐԻՔԸ ՈՒՆԵՑՈՂ ՀԻՒԱՆԴՆԵՐՈՒՆ, ՇՆՈՐՀԻԻ ՇՐՋԱՆԻՆ ԱՌԱՋԻՆ ԵՒ ՄԻԱԿ Բ Ա Յ M R I ի ն ՈՐ ՍԿՍԱԻ ԳՈՐԾԵԼ ՍԷՆ ՄԱՐՔ ԿԵԴՐՈՆԻՆ ՄԷՋ



GE SIGNA PROFILE ULTRA OPEN MRI 15mT/s

ԺԱՄԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼ՝ 01-56 66 33 01-57 65 65 01-58 26 58 03-23 88 87



## FUEL CARDը գործածեցէք

Պենզինի գնման, ինչպէս նաեւ ձեր ինքնաշարժներուն իւղը փոխելու կամ զանոնք լուալու պարագային: Երբ մագուր պիտի գնէք, գործածեցէք FUEL CARDը՝ հեռաձայնելով 04 / 715111 - 222 - 333 թիւերուն:

- ▶ MANAR - Տորա
- ▶ ՍԱՐԳԻՍԵԱՆ - Պուրճ Գամուտ
- ▶ BASSIL - Տորա, կամուրջի մօտ
- ▶ AKEL եւ BASSIL - Տորա, «Քրետի Լիպանէ»ի մօտ
- ▶ SPEED - Գանքաշ, Կալէրի Իթքիատ
- ▶ ԳՍՅԱԿԱՆ ԿԱՅԱՐԱՆ - «Ալմազա»
- ▶ MALLAH - Անթիլիս, կաթողիկոսարանի դիմաց
- ▶ MALLAH - Գարեթ Ղաուարնէ
- ▶ MALLAH - Պալիս
- ▶ MALLAH - Ժալ էլ Տիպի մայրուղի
- ▶ CORAL - Էշբէիէ, Ս. Յակոբ Եկեղեցու մօտ
- ▶ SAAD - Մար Միայէլ
- ▶ SPEED - Նահր, «Փեօփ» ընկերութեան մօտ
- ▶ PHOENICIA - Այնճարի մուտքին
- ▶ MALLAH - Պապատէթ